

ՅԿՊ(47.925)

Դ - 26

ՀՐԱՏԱՐՈԿԻ ԹԻՖՐԻՆ «ՅԱՆԱԶ» Ի Հ 2

06 FEB 2009

5163

14 NOV 2009

ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

8808
10505

ՔՈՂԵԴԻԴՄԱԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(Արտադրության «Յառաջ» թերթից)

Խ Բ Ե Խ Ա Ն

Էլեկտրո-պարագաներ, ԱԽՐԱՐԴԻՆԻ

1920 ր.

25 FEB 2013

5889



857-2009

ԲՈՅԵԻԻԶՄԸ ԵՒ ՀԱՅԱՏԱՆԸ

Դժւար է երևակայել աւելին դաժան, աւելի դիւային ծաղը՝
ուղղւած և Հայաստանի, և սօցիալիզմի հասցէին, քան սխտա-
ռոր մտայնութեամբ բռնւած հայ մարդկանց ձգտուժը այսօր եւ
եր, բռնի ոյժով փորձ անել մտցնելու այս աւերակ ու դժբախտ
երկրում սօցիալիստական կարգեր:

Եթէ անտարակուսելի է, որ այդպիսի մարդկանց շարքում
կան ոճրագործ, բաղդախնդիր տարրեր, որոնք, «կարմիր», «յեղա-
փոխական», «կօմմունիստական» ֆրազների տակ թագնւելով,
հետապնդում են իրենց անձնական մութ նպատակները, պղտոր
ջրում ձուկ են կամենում որսալ,—ապա, նոյնքան անտարակու-
սելի է, որ կան նաև մոլորւած մարդիկ (և նրանք անշուշտ մե-
ծամասնութիւն են կազմում), որոնք իրենց շատ երիտասարդ
հասակի, կարճատեսութեան, թեթեամտութեան, տեմպերամենտի
կամ տգիտութեան պատճառով ի վիճակի չեն իրենց պարզ հաշիւ-
տալու, թէ ինչ են անում և ինչ բանի են իրօք ձգտում:

Ահա այդ մարդկանց է, որ ես ուղղում եմ իմ խօսքը:

I

ՖՐԱԶՆԵՐՆ ՈՒ ՓԱՍՏԵՐԸ

Մարդկային պատժութեան մէջ հազիւ թէ գտնւի մէկ ուրիշ
քաղաքական կուսակցութիւն, որ այնքան կարճ ժամանակում
այնքան հիմնական կերպարանափոխման ենթարկւէր, որքան ոռւս
բոլշևիկները։ Այն, ինչ որ դեռ երէկ սրբութիւն սրբոց էր նրանց
համար, այսօր դառել է միայն «բուրժուական նախապաշարմունք»
և ծաղրի առարկայ։ Եւ, ինչ որ ամենից աւելի զար-
մանալի է, ոչոք այդ բոլշևիկներից, հրաժարւելով
իր երէկ պաշտած դաւանանքներից, որոնց համար նա այնքան
մեծ կոիւ է մղել առաջ, չի զգում խղճի որևէ է խայթ, մտքի որևէ
է տարակուսանք, կամքի որևէ տատանում։ Կարծես մի ծանր բեռ
է որ դէն է շպրտւում...

Երբ բոլշևիկները ձգտում էին տակաւին իշխանութեան,
թերեւս ոչոք նրանցից աւելի մեծ մրկեռանդութեամբ և անվերա-



պահութեամբ չէր պաշտպանում խօսքի ու մամուլի ազատութիւնը՝
անձի և բնակարանի անձեռնմխելիութիւնը, 8-ժամեայ բանւորա-
կոն օրը, բանւորների ազատ կազմակերպման իրաւունքը, նրանց
անրոնադատ պայքարը իրենց իրաւունքների ու շահերի պաշտպա-
նութեան համար, Սահմանադրական ժողովի գումարումը, ամե-
նալայն ռամկավարական սկզբունքների անմիջական ու անպայ-
ման կիրառումը և այլն և այլն:

Երբ նոյն բոլշևիկները տիրացան իշխանութեան, խեղղեցին
մամուլ, այնպէս, ինչպէս ոչ մի ժամանակ չէր յանդնել անե-
լու նոյնիսկ ցարական ռեժիմը, գրաւեցին բոլոր տպարանները,
թղթի ամբողջ պահեստը, փակեցին բոլոր թերթերը, բոլոր բե-
րանները, ցըցին Սահմանադիր ժողովը, վերացրին բոլոր սահ-
մանադրական երաշխիքները ու ստեղծեցին մի այնպիսի մա-
հասարսուռ դրութիւն, երբ ոչ ոք, բացի բոլշևիկներից, վստահ
չէր կարող լինել, որ իրան չեն բռնի ու չեն գնդականարի ամե-
նաչնչին կասկածի համար, ոչ ոք վստահ չէր, որ առաւօտ փողոց
դուրս գալով պիտի վերադառնայ տուն կամ տանը՝ անկողին մտ-
նելով՝ առաւօտը պիտի գտնի իրան իր անկողնի մէջ։ Եւ այսպէս
գահավիժելով, ի վերջոյ սկսեցին կրծատել նաև բանւորների
իրաւունքները ու ոչ մի այն վերացրին 8-ժամեայ բանւորական
օրը, այլ և մտցրին 10-12 ժամեայ ստիպողական աշխատանք։

Նրանք, որ ամենակատաղի հակառակորդներն էին պատե-
րազմի ու միլիտարիզմի, նրանք, որ հրապարակ եկան անմիջա-
պէս և ամեն գնով հաշտութիւն կնքելու և խաղաղութիւն հաս-
տատելու խոստումով և գրանով իրենց կողմը զրաւեցին մոլոր-
ւած ու յոգնած ժողովրդական դանդւածները, ոչ միայն իրենց
հետ չըերին խաղաղութիւն, այլ և առաջ բերին մի անհամեմատ
աւելի աւերիչ ու մարդաջինջ պատերազմ, քան պատերազմն էր
Գերմանիայի հետ։ Ամբողջ երկիրը դարձրին մի պատերազմա-
կան բանակ, որին զոհեցին ամեն ինչ. քանի քանի միլիոններ-
մեռան բոլշևիկների յարուցած այդ դժբախտ ներքին պատերազմի-
լնթացքում գնդակից, սովոր, հիւանդութիւններից... Եւ մինչ
եւրօպական բոլոր պատերազմող պետութիւնները արդէն վա-
զուց կնքել են հաշտութիւն և վայելում են խաղաղ կեանքի-
բարիքները, դժբախտ Ռուսաստանն իո խելայեղ ընթացքով չկա-
րողացաւ տակաւին հանգիստ գտնել։ Եւ այսօր էլ դեռ առատօ-
րէն հոսում է նրա խեղճ զաւակների արիւնը ուազի դաշտերում։
Որքան միամիտ ու կոյր են մեղանում այն մարդիկ, որոնք

հաւատում են կամ կամենում են հաւատացնել ուրիշներին, թէ
ուստի բօլշևիկները, որոնք զրեթէ երեք տարւայ ընթացքում ի
ճգվակի չեղան իրենց հայրենի երկրին հաշտութիւն բերելու,
ոլիտի ընդունակ լինեն աւելի լաւ տնօրինելու մեր հայրենիքի
բախտը: Ողորմելիներ. նրանք չեն հասկանում կամ չեն ուզում
հասկանալ, որ բօլշևիկները կարող են միայն բոլոր ֆրօնտների
վրայ աւելացնել մի նոր, բոլորից աւելի վտանգաւոր և արիւ-
նալի ֆրօնտ—ներքին ֆրօնտ:

Երբ բօլշևիկները գեռ իշխանութեան գլուխ չէին կանգնած,
անսպասելի աղմուկով և սոլեգնութեամբ կուռում էին գաղտնի
դիպլօմատիայի և գաղտնի քաղաքականութեան դէմ: Բայց բա-
ռական էր, որ նրանք տիրանային իշխանութեան, և ամեն ինչ
հիմնիվեր շրջեց: Պարզւեց, որ գաղտնի դիպլօմատիան ու գաղտ-
նի քաղաքականութիւնը ատելի են եղել բօլշևիկներին միայն
այն պատճառով, որ ուրիշներն են վարել այդպիսի քաղաքակա-
նութիւն և դիւանագիտութիւն: Բայց երբ քաղաքականութեան
և դիւանագիտութեան վարիչներն իրենք բօլշևիկները դառան,
ակսւեց գաղտնի դիպլօմատիայի և քաղաքականութեան մի այն-
պիսի շրջան, որի հետ կարող են մրցել միայն երիտասարդ
թիւրքերը քաղաքական պայքարի իրենց արևելեան նենգ, դա-
ժան ու դաւադրական մեղատներով: Պրօվոկացիա, կաշառք, դաւ,
սադրանք, գաղտնի ագիտացիա, գրգռում, կազմակերպումն հա-
կապետական տարրերի՝ խոռվութիւններ և ապստամբութիւններ
առաջ բերելու համար օտար երկրներում— ահա այն զազրելի
սիստեմը, որ ոռւս բօլշևիկներն ամբողջովին ժառանգեցին քա-
քական ռեժիմից և կատարելազործեցին ոինչև վերջին աստիճան,
օգտւելով երիտասարդ թիւրքերի և գերման իւնկերների զար-
հուրելի փորձից: Բօլշևիկների Առևելքում վարած մութ և քատմը-
ն ելի քաղաքականութիւնը պերճախօս արտայալութիւն է ասի-
ական բռնակալներին յատուկ այդ տմարդի սիստեմի:

Նոյնը մենք տեսնում ենք բօլշևիկների վարած ներքին քա-
ղաքականութեան մէջ: Նրանք, որ այնքան յամառօրէն, այնքան
յախուռն կերպով և այնպիսի մեծ ցասումով կուռում էին ցարա-
կան օխրանկային, գաղտնի ոստիկանութեան արիւնարլու դա-
հճների դէմ, ստեղծեցին պատմութեան մէջ աննախընթաց մի
այնպիսի զժոխային մեքենայ, կազմակերպութիւն՝ «Զըեղվիչայ-
շան», որի առջև միանգամայն նսեմացաւ հոչակաւոր ցարական
«օխրանկան» իսկ:

Ասփազանց բնորոշ է բօլշևիկների համար նաև նրանց վերաբերմունքը դէպի ազգային ինքնորոշման սկզբունքը: Եթե դեռ իշխանութիւնը նրանց ձեռքում չէր, նրանք չտեսնւած Բափովու անվարապահութեամբ պաշտպանում էին ամեն մի աղքի բացարձակ իրաւունքը փր կամեցած ձեռվորոշելու իր բախտը: Այդ պաշտպահութիւնը կոում էր այնպիսի մոլեզին բնոյթ, որ ոուապղպայնական տարրերը ամենայն անկեղծութեամբ համարում էին բօլշևիկներին՝ հայրենիքի, Ռուսաստանի թշնամիներ: Բայց, եթե իշխանութիւնն անցաւ բօլշևիկների ձեռքը, նրանք հետզետէ այդ հարցումն էլ երևան բերին իրենց իսկական էութիւնը Նրանք չկամեցան միանգամ ընդմիշտ ճանաչել Ցարական Ռուսաստանի ճիրաններում տասնեակ ու հարիւրաւոր տարիներ տանջւած փոքր ազգերի անկախութիւնը և միանգամ ընդմիշտ հրաժարւել նրանց ներքին գործերի մէջ խառնւելու վատթար սովորութիւնից: Աւելին, գրեթէ երկու տարի բօլշևիկները ոչ մի միջոց չխնայեցին նորից իրենց իշխանութեան ենթարկելու Ֆինլանդիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Բելոռուսիան, Լեհաստանը, Ուկրանան, Վրաստանը և այլն: Անվերջ ինտրիգներ, դաւեր, կաշառք, ներքին խռովութեանց և ապստամբութեանց կազմակերպում—ահա միջոցներ, որոնց նրանք դիմեցին և դիմում են այսօր էլ, ներսից պայթեցնելու այդ երկրների անկախ քաղաքական գոյութիւնը: Եւ պատերազմ, պատերազմ ու պատերազմ ցարական անիծեալ լուծից նոր ազատւած փոքրազգերի դէմ՝ դրսից նւաճելու համար նրանց ամեն անգամ, եթե ներքին ինտրիգներն ու դաւերը չէին յաջողւում:

Այս բոլորը պարզ ցոյց է տալիս, որ յեղափողութիւնը և յեղափոխական ֆրազէօլօգիան ոչինչ չէ փոխել իրօք ոուս բռնապետական ժողովրդի հոգու մէջ:

Ցարը գնաց, եկան ուրիշները նրա տեղ, բայց ոուս ժողովուրդը, նրա ոգին մնաց նոյնը: Եւ բնական է, որ շատ քիչ բան ըստ էութեան պէտի փոխւէր նրա կեանքում: Բոնի ոյժով էր սաեղծել ոուս ազնւականութիւնն իր հսկայական Ռուսաստանը և բռնի ոյժով էլ պահում էր նա իր հպատակութեան տակ իր բռլորնւաճ օտար աղջերը: Ընկաւ ազնւականութիւնը. իշխանութիւնն անցաւ սօցիալական ուրիշ տարրերի և անհամար նեռքը, բայց ոուս բռնապետական կամքն ու մտայնութիւնը մնաց նոյնը, որովհետեւ և՛ երէկւայենտադիմական տէրերը, և՛ այսօրւան «կարմիր» տէրերը միևնոյն ժողովրդի դաւակներն են: Ուստի

այնքան դժւար է, ես պիտի ասէի, այնքան անկարելի՝ «կարմիրների» համար, ինչպէս և սեերի համար, հրաժարւել իրենց ազգային—քաղաքական յաւակնութիւններից և «պառմական իրաւունքներից»...

Ահա թէ ինչո՞ք օլունիկեան «կարմիր» Ռուսաստանն այնքան անվստահութիւն ու այնքան սարսափ է ներշնչում բոլոր ազատասէր ժողովուրդներին և առաջին ներթիւն՝ Ցարական Ռուսաստանից պոկւած մանր ազգերին...

11

ՍՊԾԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԸ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ
ԷՌԻԹԻԻՆԸ

Ո՞րն էր այն սրբազան նպատակը, որին քոլունիկները զոհեցին տարիներ շարունակ իրենց փայփայած սկզբունքներն ու զաւանանքները։ Ո՞րն է այն գերազոյն գաղափարը, որի համար քոլունիկները կատարեցին այնքան սարսափելի բռնութիւններ, նւիրաբերեցին միլիոնաւոր մարդկային կեանքեր։

Այդ նպատակն ու գաղափարը համաշխարհային սօցիալիստական յեղափոխութիւնն էր և սօցիալիստական կարգերի անմիջական իրագործումը։ Մի նպատակ էր այս, որ ամին մի իրատես մարդու համար սկզբից իսկ դատապարտւած էր վիժման, Որովհետեւ սկզբից իսկ պարզ պիտի լինէր, որ Ռուսաստանի նման տնտեսապէս, սօցիալապէս և կուլտուրապէս յետամնաց մի երկիր ոչ մէկ դէպում չի կարող լինել առաջապահ՝ սօցիալիստական յեղափոխութեան համար։ Մի գերազանցապէս զիւղացիական երկիր, ուր տակաւին իշխում է նահապետական տնտեսութիւնը, ուր կապիտալիզմը դեռ նոր էր սկսել թոյլ նւաճումներ անել, ուր ազգաբնակութեան մեծագոյն մասը գիւղացիութիւնն է կազմում և ուր բանւորութիւնը համեմատաբար այնքան ողորմելի քանակ է ներկայացնում, ինչպէս պիտի կարենար յանկարծ, մոգական գաւազանի մի շարժումով, սօցիալիստական երկիր դառնալ։

Մարքսիզմի ամենամեծ երախտիքներից մէկը մարդկութեան՝ այն է, որ ազատեց նրան այն վտանգաւոր, կործանարար ցնորքից, թէ սօցիալիզմի իրագործումը միանգամայն կախւած է անհատների կամ նոյնիսկ մասսաների բարի կամեցողութիւնից։

Կար ժամանակ, գրեթէ մի դար առաջ, երբ մարդկութեան լաւագոյն զաւակներն անգամ այն միամիտ հաւատն ունէին, թէ ամենայն հեղտութեամբ կարելի է իրագործել սօցիալիզմը համոզելու հանապարհով (Օռլէն, Սէն-Սիմոն) կամ բռնի միջոցնե-

բով (Բարեօֆ, Բլանկի): Բայց եկաւ գիտական սօցիալիզմը յանձին Մարքս էնդելոի ստեղծած հոյակապ սիստեմի և անվիճելի կերպով ապացուցեց, որ սօցիալիզմի իրականացման համար ամենից առաջ պէտք են առարկայական (օրիեկտիւ) նոխապայմաններ:

Ո՞րո՞նք են այդ առարկայական պայմանները: — Կապիտալիզմի ծայր առ տիճան զարգացումը, այնպիսի խոշոր կապիտալիստական տնտեսութեան գոյութիւնը, որն իր մէջ պարփակում է ազգաբնակութեան խոշորագոյն մասը: Որովհետեւ առանց խոշոր կապիտալիստական տնտեսութեան՝ միանգամայն անիմաստ ու աննպատակ է դառնում արտադրութեան միջոցների սօցիալիզացիան. բացի այդ՝ առանց խոշոր կապիտալիստական տնտեսութեան անկարելի պիտի լինի ունենալ այն սօցիալական նպաստաւոր հողը, որի վրա միայն կարող է ստեղծել ու մարզել ի սօցիալական մեծ առաքելութեան համար ընդունակ, գիտակից, հասուն և կազմակերպ բանւորութիւն: Այնտեղ, ուր խոշոր կապիտալիստական տնտեսութիւնն իշխող չէ բացարձակապէս, ինչպէս, օրինակ, Անգլիայում, Բելգիայում, Գերմանիայում, այնտեղ, ուր կապիտալիզմի աճումը չի հասել իր գագաթնակետին, չկան և չեն կարող լինել նաև այն նախապայմանները, որոնք բաձարձակապէս անհրաժեշտ են սօցիալիզմի իրականացման համար. հետևաբար այնտեղ չի կարող որեէ լուրջ խօսք լինել սօցիալիստական կարգերի անմիջական ստեղծման մասին:

Բռնի ոյժով, անվերջ ահարեկումներով ու արիւնհեղութիւններով չէ որ սօցիալիզմը երբ և է պիտի իրականանայ, նակայ մի օր այնպէս, ինչպէս կտուցի մի չնչին հարւածով ձուի մէջ հասունացած հաւի ձագուկը ջարդում է իր կեղել և դուր դալիս լոյս աշխարհ:

Այս բոլորը մարքսիզմի տարրական ճշմարտութիւններն են Լենինը մարքսիստ է և հեղինակ մարքսիստական մի լաւ գրքի՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», բոլշևիկներն իրենց մարքսիստներ են անւանում, նոյնիսկ միակ մարքսիստներ: Բայց եթէ նրանք այսօր պահպանել են տակաւին մարքսիստական ֆրազէօլօգիա, մարքսիստական ոչինչ չէ մնացել նրանց մէջ: Նրանց մտածողութեան եղանակը, նրանց գործելակերպն ամենաչնչին չտփով անդամ չունի իր վրա մարքսիստական կնիք: Ընդհակառակը, առանց վերապահութեան կարելի է պնդելոր բոլշևիկների այժմեան աշխարհայեցողութիւն

ու վարած քաղաքականութիւնը մարքսիզմին տրամագծօրէն հակառակ բաներ են:

Հրապարակ գալով համաշխարհային Սոցիալիստական Յեղափոխութեան նշանաբանով, բոլշևիկները սկզբում, երբ գեռ որոշակիով տարւած էին մարքսիստական հովերով, իրենց ուշադրութիւնը դարձրին դէպի Արևմուտք:

Նրանք հաւատացնում էին, որ իրենց արածը «սոցիալիստական մի «էքսպերիմենտ», վորձ չ: Նրանք ասում էին, որ Ռուսաստանի յեղափոխութիւնն այն ժամանակ միայն յաջողւած պիտի համարել, երբ նա կը ցնցէ և սոցիալիստական յեղաշրջում առաջ կը բերէ կապիտալիստօրէն զարգացած արևմտեան երկրներում: Շուտով երեք տարի կլինի, որ բոլշևիկները իշխում են Ռուսաստանում, բայց արևմտեան ոչ մի պետութիւն չհրապուրեց նրանց «սոցիալիստական» վորձից և հազիւ թէ հրապուրեի: Որովհետեւ այդ իսկ վորձը բոլոր գիտակից սոցիալիստներին բերեց այն անյողգող համոզման, թէ ինչ չպէտք է անել: Այդ վորձն Եւրօպայի բոլոր գիտակից սոցիալիստներին յետ մղեց «ասիական» սոցիալիզմից, ինչպէս նրանք որակեցին բոլշևիզմը, և նրա գործադրած ասիական մեթօդներից:

Եւ այսպէս, Արևմուտքը չընդունեց Լենինի «ասիական» սոցիալիզմը, չը նայելով, որ բոլշևիկները կրաւորական սպասողի գերում չմն սցին և ոչինչ չխնայեցին ներքին խոռվութիւններ հրահրելու համար արևմտեան երկրներում: Ճիշտ է, նըսնց յաջողւեց պարտւած երկիրների մէջ, օգտւելով ժողովրդական մասսաների բնական դժգոհութիւնից, ապստամբական շարժումներ առաջ բերել (Գերմանիա, Հունգարիա): Բայց այդ բոլորն անցողական երևոյթներ էին միայն:

Բոլշևիկների համար պարզ էր արդէն, որ այլևս որևէ լուրջ սպասելիք չունեն բուրժուական և իմպերիալիստական Եւրօպայից: Եթէ նրանք լինէին շիտուկ քաղաքական գործիչներ, նըրանք պիտի հրաժարւէին անմիջապէս իշխանութիւնից; հէնց որ վիժեցին նրանց ծրագիրները Արևմուտքում, և յայտնէին, որ իրենց «սոցիալիստական էքսպերիմենտը» անյաջող վախճան ունեցաւ, Բայց իշխանութիւնը կուրացրել էր նրանց, և նրանք կարծում էին, որ, հաստատելով իրենց իշխանութիւնն երկրում, նրանք հաստատում էին նաև սոցիալ զմբ: Եւ որովհետեւ սոցիալիզմի անմիջական իրականացումը Ռուսաստանում անկարելի բան էր, իսկ իշխանութեան հաստատումը հնարաւոր, բոլշևիկներն սկսե-

ցին լըել իրենց սոցիալիստական դիրքերը, մէկը միւսի յետեից, և իրենց բոլոր ճիզերը ուղղեցին մի նպատակի՝ իրենց իշխանութեան ամրագնդում: Բայց իշխանութեան ամրապնդումը մի պետութեան մէջ զերազանցանէս կախուած է այն բանից, թէ որ չափով իշխան կուսակցութիւնն իւրացնում է պետութեան ուշալ և ոչ ցնորական շահերն ու պահանջները: Եւ ընական է, որ բօլշևիկներն աս, ենթարկւելով պատմութեան երկաթէ օրէնքներին, ճարկադրուած պիտի լինէին թողնել իրենց խմբակցական նպատակները և պաշտպանել այն շահերը, որ առաջազրում է ուսու պետութիւնը, ընդառաջ գնալ այն պահանջներին, որ անում էր իշխանութեան՝ ոռւս ժողովուրդը, ոռւս ազգը:

Եւ ահա այսպէս ծայրայեղորէն կօսմօպօլիտական (աշխարհաքաղաքացիական) կուսակցութիւնը դարձաւ իր էռութեամբ մի ազգային ռուսական և նոյնիսկ ռուս իմպերիալիստական կուսակցութիւն:

Իշխանութիւնն ամրացնելու և նորսաստանի միջազգային դրութիւնը փրկելու համար էր, որ բօլշևիկները, երես դարձնելով իսպերիալիստական Արևմուտքից, դիմեցին պանիսլամիստական Արևելքին, այսինքն՝ Արևելքի ամենայետաղէմ և արիւնարբու ոյժի օգնութեան: Սա չէր խանգարում, որ այստեղ էլ պահպանուէր սօցիալիստական, կօմմունիստական ֆրազէօլօգիան՝ սա չէր խանգարում, որ «կարմիր» նշանաբանների և ֆրազների տակ թագնւէին ամենասև ձգտումներ:

Եւ այս աղազակող հակասութիւնը ծածկելու համար, բօլշևիկները ստեղծեցին մի ամբողջ թէօրիա, որով նրանք ճգնում էին ապացուցել, թէ յեղափոխութիւնն ու սօցիալիզմը շատ աւելի նպաստաւոր հոգ ունեն արևելիան յետամեաց Երկրներում, քան արևմուտքի կապիտալիստական երկրների մէջ: Այսպիսով բօլշևիկների կօմմունիզմը, որ սկզբում ձգտում էր դէպի առաջ, դէպի աւելի կատարեալ տնտեսակարգ, քան կապիտալիստականն է, իջաւ մինչև նախնական կօմմունիզմը; իր հայեացքն ուղղեց դէպի յետ, գնաց ամենաթոյլ դիմադրութեան ճանապարհով:

Սխալ պիտի լինէր բօլշևիկների մզումը դէպի Արևելք բացատրել միայն քաղաքական նկատառումներով: Այստեղ անշուշտ խոշոր դեր են կատարում նաև սօցիալական մօտիւները: Բօլշևիկական կօմմունիզմը, որ յետամեաց նորսիայում ի վերջոյ վերածւեց նախնական կօմմունիզմի, բնակ սնաբար տմենից ա-

ւելի խոր արձագանք պիտի գտնէր արևելեան յետամնաց եր-
կրներում,

Ասա ինձ՝ ով է քո ընկերը, և ես կասեմ՝ ով ես դու,
Եւ իրաւ. գերմանական պատերազմից, և անհամեմատ
աւելի երեք տարւայ քաղաքացիական կուից քայքայւած և իր-
տնտիսութեան ներկայ վիճակով մինչև 17-րդ դարը յետ մղւած-
Ռուսաստանը, որին սպառնում է անխուսափելի վանդ գաղու-
թային վայր դառնալու եւրօպական ու ամերիկեան կապիտալի վ-
մի համար, և մեռնող ու անդամահատւող թիւրքիան,— որքան-
նմանութիւն նրանց վիճակի մէջ։ Տարբեր ծայրերից ելնելով և
տարբեր նշանաբաններով, ոռւս բօլշեվիկները և թուրք միլինինե-
րը, իւրաքանչիւրն իր ժողովրդին յատուկ ձեռով ու մեթօդնե-
րով, կատարում են գերազանցապէս ազգային—պնտական գործ։

Այս, ոռւս բօլշեվիկները բռնի ոյժով և դաւերով ձգտում են
այսօր հաւաքել ցարերի ստեղծած հսկայ Ռուսաստանը, որի ա-
ռաջ մի ժամանակ դողում էր ամբողջ աշխարհը, ճիշտ այնպէս,
ինչպէս և թուրք միլինիները կամենում են վերականգնել կարմիր-
սուլթանների ստեղծած վաղեմի հզօր Օսմանեան կայսրութիւնը..

III

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՈՅԺՆ ՈՒ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՂԱ- ՔԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Նրանք, որ ծանոթ չեն բօլշեվիկեան Ռուսաստանի ներքին-
վիճակին, արամագիր են չափաղանց գերազնահատելու բօլշեվիկ-
ների ոյժը։ Կարծում են, թէ դա իրապէս մի ահռելի ոյժ է, որ
ի վիճակի է իր կամքը տիրաքար թելագրելու ամբողջ աշխարհին։

Իրական ոյժերի փոխյարաբերութեան այղքան միամէտ-
գնահատման մէջ անշուշտ խոշոր դեր են կատարում յաղթող
մեծ պետութեանց երերուն դիրքը բօլշեվիկների հանդէպ, որ ի-
րենք բօլշեվիկները վախով են բացատրում, և բօլշեվիկների ուղ-
մական յաջողութիւնները ոռւսական ներքին ճակատների վրա-
(Կոլչակ, Դենիկին)։ Մինչդեռ դաշնակիցներն իրօք երբէք չեն
վախցել բօլշեվիկներից, այլ կամեցել են միայն նրանց մղած-
քաղաքացիական կոմիտե՝ թուլացնելու համար Ռուսաստա-
նը և իրագործելու համար նախկին ոռւսական կայսրութեան
սահմաններում իրենց քաղաքական այն ծրագրները, որ նրանք
(գլխաւորապէս Անգլիան) առաջադրել են։ Ճիշտ է, նրանք բա-
ցայայտօրէն օդնել են և Կոլչակին, և Դենիկինին, և բոլոր հա-

կարօլշեիկեան ոյժերին, քայց և միենոյն ժամանակ իրենց քաղաքական գիւային խաղերով շատ էական օգնութիւն են հասցընել նաև բոլշևիկներին, վերջինները, դպալով ու դիտակցելով, որ առանց դաշնակիցների հետ համաձայնութեան գալու, անկարելի է վերջ դնել քաղաքացիական կուին Ռուսաստանում, բազմաթիւ անդամնոր դիմեցին նրանց և խոստացան ամեն տեսակի զիջումներ ու արտօնութիւններ, միայն թէ իրենց հանգիստ թողնեն: Եւ բոլշևիկների արևելեան քաղաքականութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ միջոց սպառնալու դաշնակիցներին, որպէսզի սրանք վերջապէս ուշադրութեան առնեն բոլշևիկների դիմումները, ճանաչեն նրանց և հաշտութիւն կնքեն նրանց հետ Ռւրիշ խօսքով՝ բոլշևիկների արևելեան դաւերը միայն ապացոյց են նրանց քաղաքական անզօրութեան ու սնանկութեան:

Ով հետեւ է բոլշևիկների դիւանագիտական ճիգերին, նա չէր կարող չնկատել, որ բոլշևիկների գերագոյն տենչանքն է արժանանալ վերջապէս հզօր պետութեանց ողորմածութեան: Եւ պէտք է քաղաքական մանուկ լինել կարծելու համար, որ դաշնակիցները շեն կարող, երբ որ կամենան, զսպել բոլշևիկներին և ստիպել նրանց կանգնելու այնտեղ, ուր որ իրենք կմատնանշեն: Ռուսաստանի քաղաքացիական կուի այն բոլոր վոյրկեաններին, երբ կուող կողմերը ուժեղացել են աւելի, քան ցանկալի է եղել դաշնակիցներին, կամ սպառնացել են արդէն այն շրջաններին, որոնք քաղաքական մեծ կարևորութիւն են ունեցել դաշնակիցների համար, դաշնակիցները միշտ գտել են միջոցներ (կամ դիպլոմատիական խաղերով կամ նորանոր ճակատներ ստեղծելով) յաղթող ոյժի առաջն առնելու:

Բաւական է վերյիշել միայն պատերազմական իրադարձութեանց ընթացքը վերջին երկու տարւայ մէջ ռուսական նախկին կայսրութեան սահմաններում, որպէս զի պարզ լինի այդ: Երբ անցեալ տարի աշնան Դենիկինի զօրքերը մօտենում էին Մոկւային, թւում էր, թէ ամեն ինչ վերջացած է արդէն, թէ բոլշևիկների օրերը հաշւած են արդէն: Բայց յանկարծ, հիւսիսային ֆրոնտը անգլիացիք թողին ու հեռացան, յանկարծ Մերձքալթեան ճակատում ինչ որ խորհրդաւոր անցքեր պատահեցին ի նպաստ բոլշևիկների, և հաստանն ու Ռուսանիան, որոնք սկսէլ էին կոիւներ բոլշևիկների դէմ, յանկարծ կանգ առան անհասկանալի պատճառով և վերջապէս Դենիկինի դետեւում, Ռւկրայնայում, երևացին զանազան ուժեղ պարտիզանական խմբեր, որոնք

կապ ունէին Պետլիւրայի հետ, իսկ վերջինս պաշտպանում էր-
կազմակիցների կողմից։ Իսկ այս տարի, երբ քօլշեիկները, ընդ-
ակառակը, սկսեցին յաղթել իրենց թշնամիներին, ու անց քող-
ակառակը զախջախել Դենիկինին, և թւում էր արդէն թէ ամնն ինչ-
ուց ջախջախել Դենիկինին, և թւում էր արդէն թէ ամնն ինչ-
ուց վերջացած է, թէ քօլշեիկները իրերի տէր են Ռուսաստանում,
և թէ նրանց յաղթանակը վերջապէս ապահովւած է։

Քիչ չէին նաև մեզ մօտ այդպիսիք, որոնք հաւատուս էրու,
թէ մէկ երկու շաբաթ ևս, և բօլշևիկեան հեղեղը հիւսիսից կհա-
սնի մեր սահմանները։ Եւ Բագրի մէջ կատարւած բօլշևիկեան—
տաճկական ֆարսը նոյնիսկ խռւճապային տրամադրութիւն առաջ-
բերեց շատ շատերի մէջ։ Արդէն կարծում էին, որ հիւսիսի բօլ-
շևեց շատ շատերի մէջ։ Արդէն կարծում էին, որ հիւսիսի բօլ-

Հայուստան:

Բայց որքան դառն պէտք է լինի հիասթափութիւնն այն բոլոր մոլորւած և ըաղդախնդիր մարդկանց, որոնք իրենց յոյսերը դրել են հիւսիսից գալիք ոյժերի վրա: Եթէ իրաւ բօլշէկը կօրքերը մտել են Բագրւ նրանք չեն կարող այնկեան զօրքերը մտել են Բագրւ նրանք չեն կարող այնտեղ շատ ուժեղ լինել, որ գլխաւորն է, երկար մնալ:

ինչու, Արովինետե վերջին մէկ երկու շաբաթւայ ընթաց-
քում բօլշևիկեան Ռուսաստանի քաղաքական և ռազմական դրու-
թիւնը կըկին այնքան վատթարացաւ,որ բօլշևիկները չեն կարող
մեծ դօրք տրամադրել կովկասեան իրենց իսկական թէ քօղար-
կւած դաղափարակիցների աւանտիւրաների համար:

րի հետ, յանկարծ այնպիսի անհաշտ դիրք բռնեց նրանց հանդէպ, որ բօլշևիկները ստիպւած եղան թողնել բանակցութեանց վայրը և ձեռնունայն տուն վերադառնալ:

Այս բոլոր իրադարձութիւնները մեծ իրարանցում են առաջ բերել բօլշևիկների աշխարհում, Եւ նորից ահազանգ է հնչում Մօսկւայից:

Վտանգն այսքան մեծ է բօլշևիկների համար, որ վերջիններս հարկութրւած են ստեղծելու մի արտակարգ զինւորական նախորհուրդ՝ կազմւած ցառական գեներալներից և նոյնիսկ մի ցառական նախարարից (Պոլիվանով), Աւելին, բօլշևիկները այս անգամ իրենց դիմակները վայր են նետել և յայտարարել թէ Ռուսաստանը ստիպւած է ազգային կոիւ մղել Լեհաստանի դէմ, որը կամենում է ոռոսական շրջանները նւաճել:

Բօլշևիկների գրութիւնը բնաւ ապահով չէ նաև Հիւսիսային կովկասում, և կօզակների մէջ վտանգաւոր խմարումներ են նկատւում նորից բօլշևիկների դէմ:

Բայց բօլշևիկների գրութիւնը ապահով չէ կարող լինել նոյնպէս և Ադրբէջանում ու Դաղստանում, որոնք Սօվետական, բօլշևիկեան գոյն ընդունելով, մեծ խոստումներ են ստացել բօլշևիկներից իրենց պանիսլամիստական մութ ծրագիրներից իրագործման համար և որոնք դաժան յուսախարութիւն պիտի ունենան անտարակոյս, երբ տեսնեն, որ ոռու բօլշևիկները ոչ մի իրական օգնութիւն չեն տալիս նրանց, այլ միայն իւրացնում—տանում են Բազւի նաւթը դէպի հիւսիս միլիոնաւոր փթերով և փոխարէնը ոչինչ չեն տալիս ու չեն էլ կարող տալ: Եւ այն օրը, երբ դաշնակիցները կթելադրեն բօլշևիկներին հրաժարել Բազւից՝ այդ գնով ձեռք բերելու համար հաշտութիւն, մի օր անգամ չի մնայ այնտեղ Սօվետական իշխանութիւնը:

Ինչու: Որովհետև բօլշևիկների գերագոյն մտահոգութիւնն է փրկել իրենց գրութիւնը բուն Ռուսաստանում: Այս նպատակի համար նրանք պատրաստ են շատ և շատ կարևոր շահերից հրաժարւել:

Բօլշևիկների գրութիւնը Ռուսաստանում այնքան խախուտ է ամեն տեսակէտով, և դաշնակիցների ստեղծած նոր վտանգը Լեհաստանի Աւկրայնայի, Մախնօյի, Ֆինլանդիայի, Վրանգելի և շուտով թերես նաև Ռումանիայի կողմից այնքան սպառնական է, որ բօլշևիկները, հակառակ իրենց բոլոր ցանկութիւններին՝ չեն կարող ալրեսիս քաղաքականութիւն վարել ոչ հանդէպ դաշնակից-

ների և ոչ էլ հանդիպ այն բոլոր ազգային ոյժերի, որոնց յետ-
նում կանգնած են դաշնակից պետութիւնները:

Դրա լաւագոյն ապացոյցն այն է, որ բօլշեվիկները, որոնք
այնքան անհաշտ և գրգռիչ նօտանիք էին ուղարկում Վրաստա-
նին, ընդամենը մի ամիս առաջ, երբ լեհացիներն և ուկրայնացիք
դեռ չեին սկսել իրենց ընդհանուր յարձակողականը Ռուսաստա-
նի գէմ, այսօր, երբ Վրաստանին հարեւն Ադրբէջանը բօլշեվիկ-
եան է դառել, անհրաժեշտ են գտել հաշտութիւն կնքելու Վրա-
ստանի հետ, ճանաչել այդ երկրի անկախութիւնը և գէթ առ-
ժամանակ հրաժարւել նրա ներքին գործերի մէջ խառնելու յա-
ւակնութիւններից:

Բայց միայն վերոյիշեալ իրադարձութիւնները չեն, որ ստի-
պում են բօլշեվիկներին շտապել հաշտութիւն կնքելու ոչ միայն
Վրաստանի, այլ և բոլոր պետութեանց հետ: Պատճառները շատ
աւելի խոր են:

IV

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՅՔԱՑՈՒՄԸ

Բօլշեվիկեան Ռուսաստանի ամենավիրաւոր, ամենավտանգա-
ւոր և, ես պիտի ասեմ, ճակատագրական կողմը նրա տնտեսու-
թիւնն է: Այդ տնտեսութիւնը գտնւում է այսօր, բառիս իսկա-
կան իմաստով, կատաստրօֆիկ վիճակի մէջ:

Եթէ կամենայինք փնտռել այդ օրհասական քայլայման
պատճառները, պիտի գտնէինք, որ կան չորս գլխաւոր պատ-
ճառներ, ա. համաշխարհային պատերազմը, բ. բօլշեվիկների սօ-
ցիալ-տնտեսական խելայեղ «էքսպերիմենտը», գ. գլուխէ երեք տա-
րի անընդհանուր քաղաքացիական կոիւը, որ միշտ բոլոր
պատերազմներից ամենից աւելի արիւնուն ու կործանարարն է
լինում, և վերջապէս, դ. այն պաշարման վիճակը, որին ենթարկ-
ւած է բօլշեվիկեան Ռուսիան դաշնակից պետութիւնների կողմից:

Առաջին պատճառը կատարել էր իր քայլայիչ գործը ան-
կախ բօլշեվիկների կամքից և մի տխուր ժառանգութիւն էր նը-
րաց համար: Բայց մնացած երեք պատճառներն ամբողջովին
հետևանք են բօլշեվիկների ներգործոն քաղաքականութեան:

Խօսենք նախ բօլշեվիկների տխրահռչակ սօցիալ տնտեսական
էքսպերիմենտի մասին, որի միջոցով նրանք կարծում էին,
թէ պիտի իրականացնեն անմիջապէս սօցիալիստական կարգերը
Ռուսաստանում և իրենց «բարի» օրինակով վարակեն համայն-
շախարհը:

Երբ տեղի ունեցաւ գերմանական յեղափոխութիւնը, տապալւեց իւնկերների կառավարութիւնը և իշխանութեան զլուխը անցան գերմանական սօցիալիստները, որոնց կազմակերպութիւնն ամբողջ երկրագնդի վրա ամենամեծն է և ամենակուռը, սրանք ոչ մի հնարաւորութիւն չգտան անմիջապէս սօցիալիստական յեղաշրջում մտցնելու իրենց երկրում էր թէ, եթէ, իրաւ, կայ մի երկիր, որ հասունացած է սօցիալիստական կարգերի համար, ամենից առաջ այդ պիտի լինէր Գերմանիան, որի ազգաբնակութեան երկու երրորդ մասը կազմում է բանւորութիւնը։ Մանաւանդ, որ չկար սօցիալիստորէն աւելի գիտակից, աւելի կարգապահ, աւելի աշխատաէր և սօցիալական զգացումի տէր և քաղաքականապէս մարդւած մի բանւորութիւն, բան գերմանականն էր, որի հսկայական կազմակերպութիւնները հիացմունք էին առաջ ըներում ամբողջ աշխարհում, նոյնիսկ թշնամի բանակում։

Բայց ի՞նչ պատահեց։ Գերման բանւորութեան մեծագոյն մասի ներկայացուցիչները, որոնց ձեռքն անցի էր ամբողջ իշխանութիւնը և որոնք ամենալայն հնարաւորութիւններն ունէին իրագործելու իրենց սօցիալիստական ձգումները, քննելով Գերմանիայի տնտեսութեան վիճակը՝ եկան այն եզրակացութեան, թէ փորձ անել սօցիալիստական կարգեր մտցնելու մի այնպիսի ժամանակ, երբ երկրի ամբողջ տնտեսութիւնը քայքայւած է համաշխարհային պատերազմի պատճառով, նշանակում է նախօրօք անյաջողութեան դատապարտել այն և միանգամայն վարկարեկել սօցիալիզմի գաղափարը լայն մասսաները մէջ։

Եւ եթէ Գերմանիայի պէս մի պիտութեան մէջ իշխող սօցիալիստական կազմակերպութիւնների ներկայացուցիչները ներկայ պայմաններում վտանգաւոր համարեցին սօցիալիզմի անմիջական իրականացումը, ապա ի՞նչ խօսք կարող էր լինել իր աղքարնակութեան ճնշող մեծամասնութեամբ գիւղացիական Ռուսաստանի մասին, որի մէջ ոչ մի լուրջ առարկայական (օրիեկտիւ) նախապայման չկար սօցիալիստական յեղաշրջման, համար Մանաւանդ, որ պատերազմը զզալի հարւածներ էր հասցըել նոյնիւկ այն փոքրիկ կապիտալիստական օջախներին, որոնք անքան դժւարութեամբ ստեղծւել էին ցարական կառավարութեան հովանու տակ մի քանի տասնեակ տարիների ընթացքումի ջնայիլով դրան, բոլշևիկները՝ առանց երկար ու բարակ մտածելու որոշեցին մի ծանր փորձ, և սօցիալիստական էլեմենտը

մենաւ անել իրենց դժբաղդ երկրի գլխին և մի լաւ դաս տաէ
«ճահճացած» Արևմուտքի հաստագլուխ սօցիալիստներին, թէ և
վերջիններից էին նրանք իւրացրել սօցիալիզմի տարրական հի-
մունքները:

Կապիտալիստական դասի ձեռքից աննախնթաց բռնութիւն-
ներով խլեցին արտադրութեան բոլոր միջոցները և ամբողջ տն-
տեսութեան ղեկավարութիւնը յանձնեցին ընչաղուրկ տարրերին
թէ քաղաքներում և թէ գիւղերում: Հետեանքն եղաւ այն, որ
մարդիկ, որոնք իրենց հոգեբանութեամբ դեռ ստրուկներ էին,
ծոյլ և տգէտ, փոխանակ դարկ տալու արտադրութեան, գերա-
դասեցին սպառել այն, ինչ որ հեշտութեամբ ընկնում էր նրանց
ձեռքը: Ինչու աշխատել, քանի որ կարելի է վայելել: Երեկ ու-
րիշներն («բուրժույներն») էին վայելում, այսօր էլ մենք կը-
վայելենք, — այս էլ իշխող մտայնութիւնն այն բոլոր հողագուրկ
և տգէտ մասսաների, որոնք գնում էին բոլշևիկների յետեից:

Իրենց իշխանութիւնն ամրապնդելու գերագոյն մտահոգու-
թեամբ տարւած՝ նրանք հարկադրւած էին յագուրդ տալ ամրոխի
ամենաստոր բնաղդներին ու ախորժակներին: Այդ կազմակերպ
ւած թէ անկազմակերպ թալանի հետեանքով աշխատսնքի ար-
տադրողականութիւնը (производительность) ընկաւ չտեսնած
չափերով թէ քաղաքում և թէ գիւղերում: Բաղմաթիւ գործա-
րաններ կամ բնաւոր ոչինչ կամ զրեթէ ոչինչ չէին արտադրում,
թէն նրանք ունեին բազմահազար բանւորներ, որոնք ապրուստի
միջոցներ և թալանի հնարաւորութիւններ էին ստանում բոլ-
շևիկեան կառավարութիւնից: Այդ բանւորները հետզհետէ կազմե-
ցին մի արտօնեալ դասակարգ, որ շատ խոշոր ծառայութիւն էր
մատուցանում բոլշևիկներին, դառնալով յենարան նրանց միա-
հեծան տիրապետութեան համար:

Գիւղում այդ տիպի բանւորների դերը կատարում էին ըն-
չազուրկ, աղքատ գիւղացիները (այսպէս կոչւած ճեմոտան),
որոնց քմահաճոյքին էին յանձնել բոլշևիկները մնացած գիւղացի-
ների (այսինքն՝ նրանց ճնշող մեծամասնութեան) ոչ միայն գոյ-
քը, այլ և կեանքը: Այս հողի վրա ծագեցին զարհուրելի արիւն
հեղութիւններ, ջարդեր և պօղրօմներ հսկայական տարածու-
թիւնների վրա: Հողատէր, բայց աշխատաւոր գիւղացիութէն-
ցոյց տւեց այնպիսի հերոսական գիմադրութիւն բոլշևիկներին:
Նրանց հովանաւորած «աղքատներին», որ լենինը ի վեհական
ստիպւած եղաւ, իր իշխանութիւնը չկորցնելու համար,

աշխատաւոր գիւղացիութեան։ Նոյնօրինակ զիջումներնա հարկա-
դրւեց անել և քաղաքում մանր բուրժուազիային։

Եթէ սակայն այդ նահանջը փրկեց բօլշևիկներին քաղաքա-
կանապէս, բայց նա չէր կարող զգալի կերպով բարեփոխել եր-
կրի տնտեսական վիճակը։ Որովհետև բօլշևիկները չունէին քա-
ղաքացիական քաջութիւն իսպառ հրաժարւելու իրենց էքսպերի-
մենտների քաղաքականութիւնից և բաւականանում էին տնտե-
սական կարկատաններով, որոնց գլխաւոր դրդապատճառը՝ իշ-
խանութիւնն ամեն գնով իրենց ձեռքը պահելու մտահոգութիւնն
էր։

Զանազան «սօցիալիզացիաների», նացիօնալիզացիաների և
մունիցիպալիզացիաների» էքսպերիմենտները, փորձերը հիմնո-
վին քայլայեցին Ռուսաստանի տնտեսութիւնը թէ զիւղում և
թէ քաղաքում։ Այդ քայլայումն այնքան աղաղակող էր և բօլ-
շևիկների մղած քաղաքացիական կուի պահանջներն այնքան
էին հրամայական, որ իրենք՝ բօլշևիկները աստիճանաբար սկը-
սեցին դիմել այնպիսի միջոցների, որոնք տրամադրէն հակա-
ռակ էին նրանց քարողած նախկին գաղափարներին։ Զրկեցին
նոյնիսկ բանւորներին իրենց դասակարգային շահերը պաշպանելու
գրեթէ բոլոր իրաւունքներից։

Սպառնալիքներով և ցինիկ խարեբայութիւններով, որոնք
միշտ ամենավարպետ կերպով քօղարկւում են սօցիալիստական,
կօմմունիստական կեղծ պատճառաբանութիւններով, 8.-ժամեայ
բանւորական օրը, որի համար նրանք ժամանակին այնքան զը-
լուխ էին պատռել, դարձրին 10—12 ժամեայ բանւորա-
կան օր։ Մկնեցին շահագործել բանւորների աշխատանքը և կի-
րակի ու տօն օրերին։

Նոյնիսկ Մայիսի մէկը, ոք աշխատաւոսութեան տօնն է և հանգստի
օր, դարձրին 10—12 ժամեայ աշխատանքի օր։ Մտցրին աշխա-
տանքի ստիպողական ընդհանուր ծառայութիւն, որ իր խստու-
թեամբ շատ քիչ է տարբերւում զինւորական ծառայութիւնից։
Մի խօսքով՝ մտցրին տնտեսական մի սիստեմ, որի նմանը կա-
րելի է գտնել միայն հին գարերում, փարաւոնների և ուրիշ ա-
րևելեան բռնապետների մօտ կամ հոօմէական կայսրութեան
օրերում, և որը ոչ մի առնչութիւն չի կարող ունենալ աշխա-
տանքը և աշխատաւորութիւնը ազատագրելու կոչւած սօցիալիզ-
մի հետ։

Այսպիսով բօլշևիկներն իրենց ասիական սօցիալիզմով և

ասիական բռնութիւններով ու մեթօդներով մի նոր, աւելի լաւ-
անաեսակարգ չստեղծեցին, այլ գահավիժելով հասան մինչև հին
դարերը և տնտեսութեան ասիական սիստեմները:

Սա մի աւելորդ ապացոյց է, որ բօլշևիզմն իր նշանաբան-
ներով ու Փրազներով է միայն առաջադիմական շարժում, մինչ-
դեռ իր էութեամբ անտարակուսելիօրէն յետադիմական և հա-
կայեղափոխական է: Որովհետեւ նա չէ յեղափոխականը, որ ա-
մենից աւելի «թունդ» յեղափոխական Փրազներով ու նշանա-
բաններով է հրապարակ գալիս, այլ նա, որի գործերը յեղափո-
խական արդիւնքներ են տալիս: Բօլշևիկներն իրենց իսկ ձեռքով
տանում են Ռուսաստանը գէպի բէակցիա, գէպի գաղութային
ստրկացում և միահեծան բռնապետութիւն:

Ռուսաստանի ներկայ տնտեսական կատաստրօֆն առաջ
քերելու մէջ ահագին դեր կատարեց նաև գրեթէ երեք տարի
անող քաղաքացիական կուրը, որ ամենից առաջ մահացու հար-
ած հասցրեց հաղորդակցութեան, փոխադրութեան միջոցներին:
Շոգեկառքերը (պարօվօզները)՝ փչացած, վագոնները՝ ջարդւած,
ճանապարհները քանդւած, կամուրջները՝ օղը ցնդած,—ահա
պատկերը ռուսական արդի երկաթուղիների: Ինկվիզիցիաների
շնորհիւ և հազար ու մի այլ պատճառներով գիւղերում անա-
սունների թիւը այն աստիճան ընկաւ, որ գիւղացին, եթէ ան-
գամ շատ հող ունենայ և կամենայ մշակել իր ամբողջ հողը, ա-
նասունների բացակայութեան կամ պակասութեան պատճառով
չպիտի կարսղանայ շատ բան անել: Այն ինչ որ մնացած էր
«աղքատ» գիւղացիների (ճեծհոտա) «սօցիալիստական» գործու-
նէութիւնից, ալան-թալանի ու ոչնչացման ենթարկեց գրեթէ
բոլոր ամենաբարեբեր նահանգներում քաղաքացիական կուի
անվերջ յետուառաջների ժամանակ:

Վերջապէս, բօլշևիկներն Ռուսաստանի ծովապաշարման վիճակը
լրացրեց երկրի տնտեսական աւերման պատկերը:

Բօլշևիկներն իրենք էլ շուտով գլխի ընկան, որ՝ առանց
երօպական ու ամերիկական մեքենաների, կապիտալի՝ Ռուսաս-
տանը ոչ մի գէպքում չպիտի կարողանայ վերականգնել իր
հաղորդակցութեան միջոցները, իսկ առանց հաղորդակցութեան
միջոցների վերականգնման՝ անկարելի պիտի լինի առհասարակ
ութի կանգնեցնել Ռուսաստանի մեռնող տնտեսութիւնը:

Բօլշևիկները հասկացան նոյնպէս, որ առանց կապիտալիս-
տական երկիրների ապրանքների՝ անկարելի պիտի լինի բա-

ւարարել լայնածաւալ երկրի միլիոնաւոր կարիքները:

Ահա թէ ինչու հաշտութիւնը կապիտալիստական եւրոպայի ու Ամերիկայի հետ դառել է այսօր Ռուսաստանի ամենաաղակող և ամենահրամայական պահանջը: Բոլշևիկների գոյութեան հարցը մեծապէս կախւած է այն բանից, թէ որքան շուտ և որքան յաջող կերպով նրանք պիտի կարողանան հաշտութիւն կնքել կապիտալիստական հզօր երկիրների հետ: Բոլշևիկների բաղդի բանալին այսօր ամբողջովին գտնւում է դաշնակից պետութեանց ձեռքում:

Եւ բոլշևիզմը, պատմութեան երկաթէ անհրաժեշտութեամբ և անխուսափելիութեամբ, պիտի ջախջախւի ու ճգմւի, եթէ նա կլուխ չխոնարհէ կապիտալիստական աշխարհի առաջ և չհրաժարւի իր կործանարար ցնորքներից և էքսպերիմենտներից:

V

Ի՞նչ է ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Բոլշևիզմի ֆրազէոլոգիան սօցիալիստական է, բայց նրա էութիւնը և պայքարի մեթոդները միանգամայն հակառակ ժամանակակից զիտական սօցիալիզմին: Բոլշևիզմը սպառողական սօցիալիզմ է, նախնական կօմմաւնիզմ: Նրա իդեալի իրական աղբիւրը ոչ թէ ապագան է, այլ անցեալը, ոչ թէ առաջադէմ եւրոպան է, այլ յետադէմ Ասիան:

Բայց ի՞նչ է սօցիալիզմը:

Սօցիալիզմն ամենից առաջ և գերազանցապէս աւելի բարձր, աւելի կատարեալ տնտեսակարգ է, քան այն կապիտալիստականը, որ տիրում է այսօր աշխարհիս ամենակուլտուրական և ամենաերջանիկ երկրներում (Անգլիա, Ամերիկա, Գիրմանիա և այլն): Որևէ տնտեսակարգի բարձրութիւնը և առաւելութիւնը կարելի է չափել աշխատանքի արտադրողականութեան աստիճանով: Առաջմամատ մարդկութիւնը չիկարողացել ստեղծել աւելի բարձր տնտեսութիւն, քան այն, որ գոյութիւն ունի այսօր կապիտալիստական կոչւած պետութեանց մէջ: Ինչու Որովհետեւ կապիտալիստական խոշոր տնտեսութեան մէջ է յաջողւել բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնն այն աստիճան, որին չէ հասել և ոչ մի այլ տեսակի տնտեսութիւն: Իսկ կապիտալիստական խոշոր տնտեսութեան մէջ ամենասիծ դերը կատարում էն արտադրութեան միջոցները, այսպէս կոչւած մնայուն կապիտալը: Արուադրութեան այն միջոցները, որոնք գիտութեան և

առեխնիքայի վերջին խօսքն են ներկայացնում, — հսկայական մերենաները, շողեշարժները, էլեքտրաշարժները և նորագոյն կատարելագործւած դորձիքները, որոնք ուրիշ, աւելի յետամեաց տնտեսութիւններին անմատչելի են՝ շատ խոշոր չափերով բարձրացնում են մարդուս աշխատանքի արդիւնաւետութիւնը:

Միւս կողմից՝ աշխատանքը մեծ կապիտալիստական գործարանների մէջ, այդպիսի մեքենաների ու գործիքների վրա, հիմնովին փոխում է աշխատաւորի հոգեբանութիւնը: Դարձնում է նրան անհամեմատ աւելի արագաշարժ, աւելի կարգապահ, ուշիմ, տոկուն, աւելի վարժ, աւելի ինտելիգենտ և ուժեղ, ու մեծապէս զարկ է տալիս նրա սօցիալական զգացումների զարգացման:

Այդպիսի բանւորների աշխատանքը բնականաբար պիտի լինի զգալիօրէն աւելի արդիւնաւէտ, քան այն բանւորներինը, որոնք աշխատում են նահապետական գործիքներով, նահապետական պայմանների մէջ:

Այսպիսով կապիտալիզմը, կապիտալիստական խոշոր տընտեսութիւնը ստեղծում է թէ առարկայական (մեքենաներ և այլն), թէ ենթակայական (հոգեբանսկան) պայմաններ, որոնք մեծ չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականութեան, արդիւնաւէտութեան աստիճանը: Անգլիայում, ուր կոպիտալիզմը ամենահինն է և ամենից բարձրը, բանւորը նոյնքան ժամանակի ընթացքում արտադրում է 2—3 անգամ աւելի, քան ուստ բանւորը, որ աշխատում է աւելի յետամեաց միջոցներով և նահապետական պայմաններում: Իսկ հայ բանւորը անտարակոյս արտադրում է մէկ ու կէս անգամ աւելի նւազ, քան ուստ բանւորը:

Միամուսութիւն է կարծի, թէ մարդկանց քժահաճոյքից է կախւած տնտեսութեան մի ձեից մի աւելի բարձր ձեի անցնելը: Պէտք է, որ կատարւի տնտեսական մի մեծ պրոցես, որի ընթացքում հիմնովին փոխւի տնտեսութեան բովանդակութիւնը, որպէսզի հսարաւոր լինի փոխել տնտեսութեան ձեւը: Կապիտալիստական տնտեսութեան ծոցում տեղի է ունենում դանդաղորէն, յարածունորէն կազմաւորումն այն բարձր սօցիալիստական տնտեսութեան, որը սի օր, փոխելով միայն իր ձեւը, իր երեւոյթը, պիտի փոխարինէ կապիտալիստականը:

Վերցնենք կապիտալիզմի մայր երկիրը՝ Անգլիան և տեսնենք, թէ ինչ առաւելութիւններ կարող է տալ այնտեղ սօցիալիզմի իրականացումը բանւոր դասի համար, որ կազմում է ազ-

դարնակութեան երկու երրորդական մասից աւելի: Նախ և առաջ այնտեղ կայ երկար ժամանակի ընթացքում ստեղծւած մի հսկայական կապիտալ, որ ծառայում է իրեն արտադրութեան միջնց Անգլիայի վիթխարի գործարանների և տնտեսական աճագին ձերնարկների մէջ: Այդ կապիտալը գերազանցապէս արդիւնաբերող կապիտալ է և ոչ թէ վաշխտուական կամ արեւարական:

Երբ անխատանքի արդիւնաւետութեան աստիճանը շատ բարձը է, կապիտալիստի շահն էլ մեծ է. և այդ շահի միջոցով է, որ նա դիզում է իր ահռելի հարստութիւնները, որոնք իրենց հերթին դառնում են կապիտալ, մտնելով արդիւնաբերութեան մէջ և ընդարձակելով արդիւնաբերութիւնը:

Եւ քանի որ Անգլիայի հարստութեան մեծագոյն մասը նրա արդիւնաբերական կապիտալն ու նրա արտադրութեան միջոցներն են, սօցիալիստական յեղաշրջման դէպքում այդ կապիտալն ու արտադրութեան այդ միջոցներն են, որ պիտի ենթարկւեն պետականացման, սօցիալիզացիայի:

Այդ դէպքում որևէ տնտեսական փոփոխութիւն կմտցնմէի բնաւ:

Փոփոխութիւնը կլինի սօցիալական և իրաւական: Կապիտալիստական դասը կորցնում է իր կապիտալը և զրկում է հնարաւրութիւնից շարունակելու աշխատանքի շահագործումը: Կապիտալը, արտադրութեան բոլոր միջոցները դառնում են պետութեան սեփականութիւն, և աշխատաւորն իր վաստակը ստանում է ամբողջութեամբ, ու ոչ մի յաւելեալ աշխատանք չի մըտնում այլես կապիտալիստի գրպանը՝ իրեն շահ: Արտադրութեան միջոցները այժմ արդէն ծառայում են ամբողջ աշխատաւորութեան և ոչ թէ միայն մի փոքրաթիւ շահագործող դասի:

Այսպիսի մի յեղաշրջում Անգլիայի պէս մի խոշոր կապիտալիստական երկրում իսկապէս կարող է ձեռնտու լինել բանաւորական մեծամասնութեան համար: Տնտեսական վիթխարի մերենան, մի շարք բարեֆոխումներով, կը շարունակէ գործել և, մի փոքր դասի անչափելի հարստացման փոխարէն, հաւասարապէս կհարստանայն կապահովւի ամբողջ աշխատաւոր ժողովուրդը, անհամեմատ աւելի արդիւնաւէտ կերպով, քան սինչ այդ որովհետև նա այժմ պիտի ստանայ իր ամբողջ վաստակը:

VI

ԲՈԼՇԵԿԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ
Վերցնենք այժմ Հայաստանը և տեսնենք, թէ ինչ տնտե-

սական հետեւանքներ կարող է առ սօցիալիստական հասարակակիցի անմիջական հաստատման փորձը մեր երկրում:
Հայաստանում արդիւնաբերական խոշոր կապիտալ չկայ
բնաւ:

Հայ ժողովուրդը եթէ ունի մի փոքրաթիւ կապիտալիստական դաս, նա էլ գտնւում է Հայաստանի սահմաններից դուրս՝ Վրաստանում, Աղբքէջանում, Ռուսաստանում, Պալսում, Իզմիրում, Եգիպտոսում և այլուր. Այդ դասը սեփականազուրկ անել մենք չենք կարող. հետեւաբար չենք կարող խլել նրանց ձեռքից նրա արագրութեան մեծարժէք միջոցները:

Իսկ Հայաստանի ներսում եղած կապիտալը վաշխառուական է և առևտրական գերազանցապէս. Այդ կապիտալը—ապրանքներ, դրամ—մեծ չէ, և հեշտ է յափշտուկել այն, բայց աւելի և հեշտ է սպառել այն:

Մակայն ի՞նչ կշահի դրանից մեր աշխատաւորութիւնը և մեր երկիրը:

Ռուսաստանի բօլշեվիկեան փորձը ցոյց տռեց, որ պատրաստի ապրանքներն ու մասնաւոր սարդկանց մօտ եղած դրամը, սօցիալիզացիայի դէպքում, ընկնում է այն մարդկանց ձեռքը, որոնք զէնք ունեն և ճարպիկ ու աւազակ են. Իսկ մնացած չնշին մասն էլ հալւում է զանազան ռովետական զոչւած խանութներում:

Հետեւաբար ի՞նչ պիտի ընկնի հայ աշխատաւորութեան ձեռքը: Գիւղերում—ոչինչ: Իսկ բաղաքներում չատ և շատ չնշին բան, որ նա կսպառէ առենաշատը մէկ ամսւայ ընթացքում:

Յետք: Յետոյ—նրա դրութիւնն աւելի ևս կվատթարանայ և նոյն իսկ անյուսալի կղառնայ: Ինչու: Որովհետև մեր երկրում չկայ արդիւնաբերական կապիտալ, որ կարելի լինէր սօցիալիզացիայի հնթարկել և որի միջոցով հնարաւոր լինէր հիմնապէտ բարելաւել, բարձրացնել աշխատաւորութեան տնտեսական զինակը ու սուեղծել իսկապէս սօցիալիստական կարգեր: Տնտեսական տեսակէտով մենք առնւազը մէկ-երկու դար յետ ենք մընացել ժամանակակից Անգլիայից:

Մեր երկիրը ոչ միայն զուրկ է սօցիալիստական անտեսակարգի գլխաւոր նախապայմանից՝ արդիւնաբերական կապիտալից, այլ նա չունի նոյն իսկ բաւականաչափ դրամազլուխ, որպէսզի իր սեփական միջոցներով վերականգնի աւելուած տնտեսութիւնները, սաքի կանգեցնի հարիւր հազարաւոր դադթականներին, որոնք՝ թալանւած ու անօթի՝ սպասում են այն երջա-

նիկ օրւան, երբ հնարաւորութիւն կստանան վերադառնալ իրենց
ընակավայրերը: Եւ որպէսզի կարելի լինի այդ ընչազուրկ գիւ-
ղացիական մասսաները վերաբնակեցնել իրենց տեղերում և
ստեղծել նրանց համար տնտեսութիւն, պէտք է ամենից առաջ
ունենալ մեծ դրամագլուխ:

Եթէ Հայաստանում լինի «առվետական» կոչւած բօլշեիկեան
իշխանութիւն, որը իրը թէ պիտի ստեղծէ անյապաղ «սօցիալիս-
տական դրախտ», ինչ միջոցնեով նա պիտի կարողանայ լուծել
մեր երկրի ամենացաւոտ հարցերից մէկը—գաղթականական
հարցը: Ո՞վ է տալու հայ, բօլշեիկներին այն հսկայական դրա-
մագլուխը, որով նրանք կարողանան պահել գաղթականներին,
որբերին, հնարաւորութեան դէպքում, տեղափոխել իրենց ընա-
կավայրերն և վերականգնել նրանց աւերւած տնտեսութիւնը:
Ո՞րտեղից պիտի դանեն մեր տնարոյս բօլշեիկներն այն մեծ կա-
պիտալը, որով նրանք ի վիճակի լինեն ձեռք բերել մեր քայլքայ-
ւած գիւղացիութեան համար լծկաններ, գիւղատնտեսական գոր-
ծիքներ և այլն: Արդէն աժերիկական յանձնախումբը, որ եկել
էր մեծ գումարով Ալէքսանդրապոլի շրջանը հայ գիւղացիների
համար լծկաններ գնելու համար, բօլշեիկեան խլոտումներից յե-
տոյ մեկնել է Հայաստանի սահմաններից, յայտնելով որ լծկան-
ներ չի գնի, որովհետեւ չի կամենում, որ այդ լծկաններն ընկ-
նեն բօլշեիկների ձեռքը:

Որտեղից պիտի ստանան հայ բօլշեիկ կոչւածները այն
խոշոր կապիտալը, որով կարելի լինի կարգի բերել մեր քայլքայ-
ւած հաղորդակցութեան միջոցները. մեզ պէտք են շողեկառքեր,
գագօններ, աւտօմօբիլներ, ուլուներ և այլն, մեզ պէտք են այդ
բոլորը ոչ միայն եղած ճանապարհները վերականգնելու և բա-
ւարար վիճակի մէջ դնելու համար. այլ մեզ պէտք են այդ բո-
լորը նոր երկաթուղիներ շինելու, նոր ճանապարհներ անցկացնե-
լու համար:

Առանց հաղորդակցութեան միջոցների բարելաւման ան-
հնար պիտի լինի վերաշինել մեր աւերւած երկիրը, մեր քայ-
լքայւած տնտեսութիւնները:

Բօլշեիկները պիտի խարեն ձեզ ասելով, թէ ամեն ինչ, որ
պէտք է հայ ժողովրդին և Հայաստանին, կարող է տալ և կտայ
մուսաստանը: Բայց բօլշեիկեան մուսաստանը, եթէ իվիճակի
մինչը որևէ բան մեզ տալու, ամենից առաջ իր հիւանդ զլիսի ճա-
քը պիտի տեսնէր: Մենք գիտենք, որ բօլշեիկեան մուսաստանը

նոյնքան կարօտ է բուժման և խնամքի, որքան և Հայաստանը՝ Նա ոչ միայն չի կարող տալ մեզ արտադրութեան միջոցներ, այլ և հաց, որով այնքան հարուստ էր նա առաջ և որի պակասութիւնից այնքան նա տառապում է այսօր. Մենք գիտենք, որ բօլշևիկեան Ռուսաստանը սովից է մեռնում այսօր:

Սպասել օգնութիւն մի, թէկուզ, շատ ընդառձակածաւալ պետութիւնից, որ ինքը դըսի օգնութեան ազաղակող կարիք է զգում, նշանակում է ապրել ցնորդներով կամ միամիտներին ու կոյրերին խարելու համար ստել անամօթաբար:

Բօլշևիկեան Ռուսաստանը ուրիշ երկրներին միայն մի բան ունի տալու—իր վարակիչ թոյնը, իր ախտաւոր մտայնութիւնը, իր ազգակործան ցնործը, իր վիժած սօցիալական փորձերը: Եւ այս բոլորից արևան, սովի և համաճարակ հիւանդութեանց մահասարսուռ հոտն է փչում: Այս բոլորը մեզ խոստանում է կատարեալ բնաջնջում:

Եթէ բօլշևիկեան Ռուսաստանից բօլշևիկեան Հայաստանը ոչինչ չպիտի կարողանայ սասանալ, թերեւս լինի մէկ ուրիշ երկիր, որ ընդառաջ գնայ մեր մանկամիտ սօցիալիստական Փըրկիչներին, հայ բօլշևիկներին, կապիտալիստական բոլոր երկիրների համար բօլշևիկը հաւասարազօր է ժանդախախին: Այն երկիրը, որ բռնւած է այդ սարսափելի հիւանդութեամբ, անմիջակիրը, որ ամբողջ աշխարհից, որպէսզի չկարողանայ վարակել ուրիշ առողջ երկիրները: Այդպէս վարւեցին Ռուսաստանի հետ, այդպէս էլ անկասկած կվարւեն Հայաստանի հետ:

Այն միակ կապիտալիստական հզօր պետութիւնը, որ իր առատ օգնութեամբ փրկեց մեզ սովից, նա ևս պիտի դադարի Հայաստան որևէ մթերք ուղարկելուց: Բօլշևիկեան անկարգութեանց ուրւականն անդամ ստիպեց Ամերիկայի ներկայացուցիչներին շտապել թողնելու մեր երկոք սահմանները: Երեակայում էր, թէ ինչ պիտի լինէր, երբ իրօք այստեղ բօլշևիկեան յեղաշրջում կտարւէր, Այլևս ոչ մի ամերիկացի չէր մնայ այստեղ և ոչ մի փութ ալիւր չպիտի գար: Ողորմելի բօլշևիկ կօմիսարները կարծել են, թէ ապահովում են իրօք Հայաստանի հացը, երբ բռնի ուժով ստորագրութիւն են վերցրել Ալէքսանդրապոլում մեր երկրից հեսացող ամերիկացի պաշտօնեաներից ու տիկիններից. հաւատացել են կամ կամեցել են հաւատացնել, թէ Ամերիկան պիտի շարունակէ հաց ուղարկել Հայաստանին, եթէ որյնիսկ բօլշևիկեան իշխանութիւն լինի Հայաստանում:

Զգիտես թնչ կայ այստեղ տւելի. — միամտութիւն թէ նենդամիտ խուժանավարութիւն, թրենք են յիմար թէ ուրիշներին են կամենում յիմարացնել, խարել:

Պէտք է մանուկ լինել չհասկանալու համար, թէ մի ստորագաս պաշտօնեայի ստորագրութիւնը այնպիսի խոստման տակ, որի տալը նրա լիազօրութիւնից շատ վեր է, ոչ մի արժէք չունի իր բարձր իշխանութեան համոր. Այդպիսի ստորագրութիւնից, այն էլ սպառնալիքի տակ տրւած, ոչ մի պարտաւորութիւն չի կարող ծագել:

Այսպիսով բոլշևիկեան իշխանութիւնը մեր երկրում ոչ միայն անխուսափելիօրէն մահացու հարւած պիտի հասցնէ մեր ժողովրդի տնտեսութեան, այլ և պիտի զրկէ մեր ժողովուրդը և այն հացից, որ նա ստանում էր մինչև այսօր Ամերիկայից:

Այս կլինի տնտեսական անմիջական հետեանքը բոլշևիկեան սոցիալիստական» աւանտիւրայի Հայաստանում: Իսկ թէ թնչ կլինին մի այդպիսի յանցաւոր աւանտիւրայի սոցիալական և քաղաքական հետեանքները, դրա մասին յաջորդ գլուխներում:

VII

ՅՈՒՇԵԽԻՉՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵԽԱՆՔՆԵՐԸ

Սոցիալիստական յեղաշրջում նշանակում է ընդհանուր սեփականագրկում յօգուտ պետութեան կամ համայնքի: Ոչ մի այն արտադրութեան միջոցները, այլ և աները, խանութները, ապրանքները և ամբողջ մասնաւոր սեփականութիւնը պիտի դառնայ պետական կամ համայնական սեփականութիւն: Դաստկարգերը պիտի վերացւեն, և՝ ամբողջ ժողովուրդը պիտի հաւասարուի սոցիալապէս, կազմելով աշխատաւորական մի բանակ: Բոլորի աշխատանքի արդիւնքը պիտի պատկանէ պետութեան կամ համայնքին, և ամեն մի քաղաքացի աշխատաւոր իր վարձը պիտի ստանայ պետութիւնից կամ համայնքից:

Մենք տեսանք, որ մի այդպիսի յեղաշրջում ներկայումս Հայաստանում տնտեսական աեսակէտով ոչ միայն չի կարող տալ որևէ դրական արդիւնք, այլ ընդհակառակը կունենայ ամենավատթար հետեանքները: Մեր ժողովրդի աշխատանքի արդիւնաւէտութեան աստիճանը այնքան է ցածր. մեր ժողովրդի արտագրութեան միջոցներն այնքան են պրիմիտիւ, նախնական, որ նա չի կարող որևէ բան շահել համայնացումից, սոցիալիզացիայից: Ոչ մի պետական իշխանութիւն ի վիճակի չէ, վերեից հրամաններ արձակելով, հիմնովին շրջել մի ամբողջ ժողովրդի տնտե-

սական կեանքը և բոլորպին նոր տնտեսակարդ ստեղծելը եթէ այդ չի բղխում երկրի անտեսական զարգացման ներքին անհրաժեշտութիւնից:

Տնտեսական աշխարհն ունի իր սեփական որէնքները և իր ներքին անխուսափելի ընթացքը, Բռնութիւնը, թէկուզ այդ բռնութիւնը կատարւի պետական իշխանութեան միջոցով, ի վեճակի չէ տեսականօրէն և հիմնականօրէն շեղելու անտեսութիւնը իր բնականոն զարգացման ուղիից. Նահապետական տնտեսութեամբ ապրող ժողովուղ չի կարող մի անգամից թռչել-հասնել սօցիալիստական տնտեսութեան՝ առանց անցնելու կապիտալիստական խոշոր տնտեսութեան բովից:

Մի ժամանակ Ռուսաստանում նարօդնիկներն էին, որ ունէին արև միամիտ հաւատը, թէ այդ կարելի է, Բայց այժմ նըրանց ժառանգութ ուսւ էսէրներն անգամ հրաժարւել են այդպիսի խակ մտքերից: Եւ միայն բոլշևիկներն են, որ մարքսիզմից յետ նահանջելով՝ խրացրել են նարօդնիկների հնամաշ գաղփարները և ծախում են աշխարհին որպէս նոր մտքեր:

Ռուսաստանի սօցիալիստական յեղաշրջման փոքձն ակնյայտօրէն ցոյց տւեց, որ սօցիալիզացիայի վաղաժամ իրագործումը յետ է մղում երկրի տնտեսութիւնը դէպի նախնական ձեւերը և ընդհանուր քայլայում առաջացնում:

Մի այդպիսի փորձ Հայաստանում անհամեմատ աւելի աղէտաւոր հետեւանքներ պիտի տայ անտարակուսելիօրէն:

Մենք վերլուծեցինք սօցիալիստական յեղաշրջման փորձի տնտեսական հետեւանքներն արդի Հայաստանում: Այժմ անցնենք սօցիալական և քաղաքական հետեւանքներին:

Մեր երկրում չկան խոշոր արդիւնաբերական դասակարդեր կան սպեկուլիանտներ, վաշխառուներ և առևտրականներ:

Սպեկուլիացիան և սպեկուլեանտները ծնունդ են արտակարգ ժամանակի և արտակարդ պայմանների: Համաշխարհային պատերազմի հետեւանքով անհրաժեշտ մթերքների և ապրանքների արտադրութիւնը չափազանց պակասել է: Չափազանց դժւարացել է նաև փոխադրութեան գործը: Փշացել են նաւերը, փշացել են երկաթուղիները, պակասել են ձիերը, անասունները: Այդ բոլորի վերականգնումը պահանջում է երկար ժամանակ: Տասնեակ միլիոնաւոր մարդիկ տարիներ շարունակ ոչինչ չեն արտադրել, այլ միայն սպառել են: Մթերքների և ապրանքների այն վիթխարի պաշարը, որ ստեղծւել էր երչար ժամանակի ան-

գուլ աշխատանքով ամրող աշխարհում, այլևս չկայ. Մինչդեռ
պահանջը չի նազել, իսկ առաջարկը պակասել է շատ մեծ չա-
փով. Ամենուրեք զզացւում է մթերքների, ապրանքների այն-
պիսի մեծ կարիք, որ մեծապէս նպաստում է գների բարձրաց-
ման. Այդ տեսակէտով Հայստանը գտնեռում է ամենազժրադրպէ-
պայմանների մէջ. Պահանջի և առաջարկի փոխարարերութիւնը
անհամեմատ աւելի աննպաստ է այստեղ, քան մի որեէ այլ
երկրում:

Այսպիսի արտակարգ պայմաններն անխուսափելիօրէն ա-
ռաջ են բերում սպեկուլիացիան և սպեկուլիատիւ կապիտալը:

Իուսաստանում բօլշեկները որոշեցին արժատախիլ անել
այդ երեսյթի, ոչնչացնել չարաշաճերի (սպեկուլիանտների) դա-
սրւ ծիշտ է, նրանց յաջողւեց շատ և շատ սպեկուլիանտներ ոչըն-
չացնել ֆիզիքապէս, շատերից խլել նրանց դրամագլուխները,
ապրանքները և զրկել սպեկուլիացիա անելու հարաւորութիւ-
նից. սակայն սպեկուլիացիան, որպէս անտեսական երեսյթ,
շարիք, չվերացաւ, Որովհետեւ բօլշեկների ձեռք առած միջոց-
ների հետևանքով ազատ սպեկուլիացիան դաշձաւ միայն զաղտ-
նի և աւելի հրէշտւոր։ Սպեկուլիացիայով սկսեցին պարապել
բոլոր նրանք, որ ապրուստի ուրիշ միջոց չունեն։ Խոշոր սպե-
կուլիացիան վերացաւ, բայց մնաց և աճեց մանր, սօցիալապէս
աւելի ծաւալուն սպեկուլիացիան, որ աւելի մեծ չարիք գառաւ
ժողովրդի գլխին։

Սպեկուլիացիան մի առ ժամանակ կարելի է մեղմել, սպե-
կուլիանտներին կարելի է պատճելով զբարել Բայց սպեկուլիա-
ցիան արժատախիլ անել հնարաւոր է միայն այն ժամանակ,
եթե մթերքների, ապրանքների բացակայութիւնը կամ պակա-
սութիւնը շուկայում կվերանայ բոլորովին։ Այդ էր պատճառը,
որ բօլշեկներին չյաջողւեց Իուսաստանում վերացնել սպեկու-
լիացիան և սպեկուլիանտների դասը, չնայելով նրանց ձեռք ա-
ռած դրակոնական միջոցներին։ Հարկաւ նոյնը պիտի լինի և
Հայստանում։

Վաշխառութիւնը և վաշխառու դասը նոյնպէս հիմնովին
կարելի կլինի վերացնել միայն այն ժամանակ, եթե զրագի պա-
կասութիւնից նեղող աշխատաւոր մարդիկ հնարաւորութիւն
կունենան վարկ ստանալու աւելի ձեռնտու պայմաններով, եթ-
ե վիճակի կլինի այդ վարկը տալու կարիք ունեցող աշխատաւոր-

ներին, Բօլշևիկեան իշխանութիւնը չի կարող այդքան դրամա-
գլուխ ստանալ երկրի ներսից, որպէսզի իվլիճակի լինի բաւա-
րարել աշխատաւորութեան կարիքը դրամի նկատմամբ. բայց
նա չպիտի կարողանայ նաև դրամագլուխ ձեռք բերել դրսից-
օտար պետութիւններից այդ նորատակի համար Ռւրեմն վաշխա-
ռուներն էլ կննան, թէս կարող է փոխւել նրանց անձնական-
կտղմբ. Կիրակոսը կթալանւի, կսպանւի, բայց վաշխառու կդառ-
կաղմբ. Կիրակոսը՝ Կիրակոսին թալանողը կամ սորանողը, ինչպէս-
այդ մենք տեսնում ենք այսօր բօլշևիկեան Ռուսաստանում:

Դառնանք այժմ առետրին ու առետրականներին:

Առատուրը ներկայումս, շնորհիւ ապրանքների շատ մեծ
պակասութեան և թղթադրամի արժեքի յարածուն անկման, առ-
հասարակ ստոցել է սպեկուլիատիւ բնոյթ: Դժւար է, և ես պի-
տի պնդեմ նոյնիսկ, անկարելի է ասել, թէ որտեղ է վերջանում
առետուրը և որտեղ սկսւում սպեկուլիացիան: Առետրականն-
այսօր զրեթէ նոյն սպեկուլիանտն է:

Ի՞նչ պիտի անի բօլշևիկեան իշխանութիւնը առետրի և
առետրականների նկատմամբ: Պիտի զրաւի առետրականներից
նրանց բոլոր ապրանքներն ու խանութները և ինքը աշխատի
իր սեփական խանութներն ունենալ: Բայց նախ մեր երկրում
մասնաւոր. մարդկանց մօտ եղած ապրանքների քանակը շատ
քիչ է: Այդ բչի էլ որոշ զգալի մասը պիտի անհետանայ կամ
հալւի ապրանքները գրաւելու և սօվետական խանութ բանալու
ժամանակ, ինչպէս այդ եղաւ բօլշևիկեան Ռուսաստանում,—մի-
քի սեփական առից հազիւ թէ աւելի լաւ կատարւի մեղ մօտ առետրի
բան, որից հազիւ թէ աւելի լաւ կատարւի մեղ մօտ առետրի
նացիօնալիզացիան (ազգայնացում—պետականացումը): Մնացած
մասը վերջապէս պիտի երեան դայ բօլշևիկեան պիտական
խանութում և ծախւի, սպառւի շատ ու շատ կարճ ժամանակում:

Իսկ երբ ծախւեցաւ, վերջացաւ ապրանքը, որտեղից և
ինչպէս մեր երկիրն ապրանք պիտի հասցնեն մեր տնարոյս
բօլշևիկները:

Բօլշևիկեան իշխանութիւնը չի ունենայ խոշոր դրամա-
գլուխ իր տրամադրութեան տակ, որպէս զի կարողանայ այդ
դրամագլխով ապրանք ձեռք բերել արտասահմանում: Իր զրաւած
ու ծախած ապրանքի զինն այնքան չնշին պիտի լինի, որ նրա-
նով անկարելի կլինի երկրի ապրանքային փոխանակութիւնը
կատարել բաւարար չափով ու եղանակով:

Ռուսաստանից չի կարելի ունենալ որևէ սպասելիք, նա

ինքն ապրանքների և դրամագլխի անհուն կարիք ունի: Կապի-
տալիստական արտասահմանը բօլշևիկեան իշխանութեան դրամ
չի տայ և չի վատահանայ:

Հետեարար, մասնաւոր առևտուրը ոչնչացնելով, բօլշևիկ-
ներն իրենք էլ չպիտի կարողանան ապրանքներ հայթայթել
ժողովրդին, եթէ պետութիւնը խափանում է մասնաւոր ձեռ-
նարկութիւնները և իր վրա է վերցնում տնտեսական շատ կա-
րևոր ֆունկցիաներ, ինչպէս, օրինակ, ապրանքների հայթհայ-
թումն և բաշխումը, այդ դէպքում նա ոչ թէ թեթևացնում է
աշխատաւոր ժողովրդի վիճակը, այլ, ընդհակառակը, շատ դըժ-
արացնում: Որովհետեւ նա ի վիճակի չէ սահմանափակել ժողո-
վը պահանջը այն չափով, որ ինը կարող է բաւարարել: Ժո-
ղովրդի պահանջը աղաղակող է և այնքան կենսական, որ նա
ամեն միջոցի կղիմէ, որպէսզի ապօրինի ճանապարհներով իր
կարիքին գոհացում տայ: Այդ հողի վրա է, որ ծագում է և
ծաղկում գաղտնի առևտուրը բօլշևիկեան Ռուսաստանում և ըն-
դունում հրէշային չափեր:

Նոյնն անտարակոյս պիտի լինի և մեզանում:

Ուրիշ խօսքով այն առևտրական դասը, որ գոյութիւն ունի
այժմ, կը վերանայ, ենթարկւելով էկապրօպրիացիայի, սեփակա-
նազրկման: Իսկ նրա տեղ հանդէս կդայ մի ուրիշ առևտրական
դաս, որը կտարբերէի առաջնից իր անձնական կազմով միայն:
Եւ այդ դասի մեծամասնութիւնը կգոյանայ գողերից ու թալան-
շիներից գերազանցապէս: Այդ նոր դասը կլինի աւելի յանդուզն
անչափաւոր և աւելի չարաշահ:

Մեր գիւղացիութիւնը, որ կարողացել է վերջին տարիների
կոիւներից ու տեղահանութիւններից յետոյ պահպանել իր փոք-
րիկ նահապետական տնտեսութիւնը, բօլշևիկների օրով պիտի
զրկւի և այն սերմացւից, հացից, երկրագործական գործիքնե-
րից և լծկաններից, որ նա ստանում է այժմ կառավարութիւնից:
Որովհետեւ բօլշևիկները դրանցից և ոչ մէկը չպիտի կարողանան
դրսից բերել—ոչ Ռուսաստանից, ոչ էլ որևէ այլ պետութիւնից:

Մեր գաղթականները պիտի զրկւեն, բօլշևիկների իշխանու-
թեան ժամանակ այն բոլոր թէ պետական և թէ մանաւանդ ա-
մերիկեան նպաստներից, որ յինչև այժմ նըանք ստանում են:
Եւ նրանք կամ պէտք է սովամահ լինեն, կամ նորից պիտի
դաղթեն օտար երկրներ՝ իրենց դիսի ճարը տեսնելու համար:

Մեր ինտելիգենցիան, որ այնքան մեծ դժւարութիւննելով

է գալիս Հայաստան, կամ այլես չի վերադառնայ իր հայրենիքը
կամ, եթէ վերադարձել է, նորից կերթայ օտար երկիրներ։ Որով-
հետև նա երբէք չպիտի կարողանայ տանել աղատ մտքի և ըս-
տեղծագործութեան այն խեղդող մթնոլորտը, որ միշտ և աժե-
նուրեք ստեղծում են իրենց շուրջը բօլշևիկները։ Որովհետև
այնուեղ, ուր իշխում են բօլշևիկները, այլ ևս ոչ մի այլ հասա-
րակական հոսանք չի կարող գոյութիւն ունենալ. ով բօլշևի է չէ,
նա ենթակայ է հալածանքի։ Այսպէս է բօլշևիկեան Ռուսիայում,
այսպէս կլինի և մեղանում։

Մեր խոշոր կապիտալիստական դասը, որ ապրում է Հայ-
աստանի սահմաներից դուրս և որ իր կապիտալով կարող է
քեղմնաւորել, կենդանացնել մեր երկրի տնտեսական կեանքը,
միանգամայն պիտի հրաժարւի բօլշևիկեան Հայաստանից։ Նա,
որ այսօր հազիւ է հաշտում դաշնակցական իշխանութեան հետ,
վաղը, եթէ բօլշևիկները տիրող դառնան, կփախչի հեռու, շատ
հեռու Հայաստանի սահմաններից։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ բօլշևիկեան յեղաշրջումը
չի կարող խոստանալ մեր դժբախտ երկրին դրական հետեանք-
ներ նաև սօցիալական տեսակէտով։ Ի վիճակի չլինելով Հայաս-
տանի տնտեսական սիստեմի մէջ հիմնական բարեփոխութիւն
մտցնել նա չպիտի կարողանայ նաև հիմնովին փոխել մեր եր-
կրի սօցիալական յարաբերութիւնները, պիտի ձգտի ոչնչացնել
հին իշխող դասակարգերը միայն նրա համար, որ առաջ բերէ
նորերը, որոնք հներից կը տարբերւեն իրենց անձնական կազ-
մով, բայց կը լինեն շատ աւելի մեծ չարիք աշխատաւոր ժողո-
վրդի դլխին, քան անգամ հները։

Գանք այժմ քաղաքական հետեանքներին։

VII

ԲՈԼՇԵԻՒԶԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Հայաստանը գտնուում է այն մեծ ճանապարհների վրա,
որոնք տանում են Եւրոպայից դէպի Ասիա, դէպի Մերձաւոր և
Միջին Արևելք։ Իր ռազմական դիրքով նա իշխում է ամբողջ
Փոքր Ասիայի վրա։

Այն մեծ պետութիւնը, որի ազդեցութեան շրջանի մէջ
կընկնի Հայաստանը, ի վիճակի կլինի սպառնալու Անգլիայի
ամենակենսական շահերին, ամենախոցելի կէտերին՝ Սուէդի ջը-
անցքին ու Եգիպտոսին, Միջագէտքին ու Պարսկաստնին և,
որը ամենակարեւորն է, Հնդկաստանին։

շին, ցարերի Ռուսաստանն այդ տեսակէտով եղել է Առ-
գլիայի ամենաոխրիմ ու վտանգաւոր թշնամին, բացի 1907—
1917 թ. Բ. շրջանից, երբ մի աւելի հզօր թշնամու՝ Գերմանիայի-
ոպառնալիքի տակ՝ անգլոռուս հակամարտութիւնը կորցրեց ժա-
մանակաւորապէս իր սրութիւնը և վերածւեց անգլո-ռուս համա-
ձայնութեան։

Կնքելով ռազմական ու քաղաքական դաշն Ռուսաստանի
հետ և պատերազմի բռնւելով Գերմանիայի հետ, Անգլիան սա-
կայն երբէք չմոռացաւ իր շահերն Արևելքում և ամեն ջանք
թափեց, որ համաշխարհային պատերազմից իր ախոյեան Ռու-
սաստանը դուրս չգայ զօրացած։ Ժամանակը հասած չէ տակա-
ւին ճշտելու հանգամանօրէն այն բաղդորոց դերը, որ Անգլիան
կատարեց այդ ուղղութեամբ Ռուսաստանի քաղաքական կեան-
քում, պատերազմի սկիզբից մինչև այսօր։ Բայց մի բան ան-
տարակուսելի է թւում այժմ իսկ—այն է, որ առանց Անգլիայի
«օգնութեան» հազիւ թէ Ռուսաստանն ընկնէր իր ներկայ ող-
բալի վիճակի մէջ։

Բոլշևիկեան Ռուսաստանի այսօրւայ կոիւը Անգլիայի դէմ
ոչ թէ մի նոր երևոյթ է (բաղիսում համաշխարհային պրօլետարիա-
տի), որ իբր թէ ոռւս բոլշևիկներն են ներկայացնում, և համաշ-
խարհային իմպերիալիզմի միջն, ինչպէս շատ միամիտներ կար-
ծում են և մեզանում), այլ մի շատ հին իրողութիւն։ Եւ այդ
իրողութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ ոռւսական իմպերիալիզմի
և անգլիական իմպերիալիզմի հակամարտութիւնը։ Ուրիշ խօս-
քով, բոլշևիկեան Ռուսաստանը շարունակում է ցարերի վաղեմի
քաղաքականութիւնը Անգլիայի դէմ։ Այն տարբերութեամբ մի-
այն, որ ներկայումս դերերը փոխւած են։ Առաջ Անգլիան էր
որ թե ու թիկունք էր տալիս մեռնող թիւրքիային, պաշտպա-
նում այն՝ ոռւսական իմպերիալիզմի հարւածներից ու դաւերից-
իսկ այսօր բոլշևիկեան Ռուսաստանն է, որ ձգտում է պահպա-
նել մահւան դատապ սրտւած տաճկական կայսրութիւնը և
վերջինիս ոյժ տալու միջոցով՝ աշխատում է ի դերե հաներ
Անգլիայի իմպերիալիստական ծրագրները Արևելքում։

Այսպիսով բոլշևիկեան Ռուսաստանը, որ իր ազգային կը-
ուիւը Անգլիայի դէմ քողարկում է ինչ որ «համաշխարհային», և
«պրօլետարական» ֆրազներով ու նշանաբաններով, իրօք իր
հերթին իմպերիալիստական մի պայքար է մղում անգլիական
իմպերիալիզմի դէմ։ Ռուսական բոլշևիզմը այսօր ոռւսական ու-

ժամապառ ու ջախջախւած իմպերիալիզմի մի նոր ձեռն է, որով
նա կամենում է խարել, սոլորեցնել իր և օտար ժողովրդական
զանգւածները՝ աւելի յաջողութեամբ հետապնդել կարենալու
համար իր մութ նպատակները:

Ազգերի և պետութեանց պատմութիւններն իրենց ներքին
արամաբանութիւնն, իրենց ներքին մղումներն ունեն: Խելագար
են այն մարդիկ և խմբակցութիւնները, որոնք իրենց ողորմելի
ոյժով և ցանկութիւններով կամենում են շրջել պատմութեան
անիւը և տիրաբար ազգել իրենց ազգի պատմական ընթացքի
վրա: Իշխանաւորները չեն որ իրենց քմահաճոյքով որոշում են
իրենց ազգի ու պետութեան քաղաքական ուղին, այլ հրկրի
աշխարհագրական դիրքը, նրա տնտեսական վիճակն ու պահանջ-
ները, ժողովրդի առանձնայատկութիւններն ու հոգերանու-
թիւնը, որ դարբնւել է գարերի ընթացքում, նրա կուլտուրայի
և տեխնիկայի աստիճանը և սի շարք այլ առարկայական պայ-
մանները: Ահա այս ազգակներն են, որ իրենց տիրական դրոշները
են դնում այն բոլոր անհատների քաղաքականութեան վրա, ո-
րոնք ցնորական յանդգնութիւնն ունեն իրենց սեփական քըմա-
հաճոյքով ու գաղափարներով դուրս գալու իրենց պետութեան
և ազգերի պատմութեան կենսական շահերի ու պահանջների
դէմ:

Եթէ կենինն ու իր համախոհները հրապարակ եկան թերես
շատ տարբեր ձգտումներով ու նպատակներով, քան այն, որ
նրանք հետապնդում են այսօր, այժմ արդէն պարզ է միանգա-
մայն, որ ոչ թէ նրանք են հարկադրել Ռուսաստանը որդեգրելու
իրենց «համաշխարհալին», «սօցիալիստական», «բարձր» նպա-
տակները, այլ ընդհակառակը, Ռուսաստանն է, որ ստիպել է նը-
րանց «սօցիալիստական» նպատակների մէջ դնել բոլորովին
այլ բովանդակութիւն, սուսական ազգային իմպերիալիստական
բովանդակութիւն:

Ռուսաստանի պատմութիւնը այսօր բօլշևիկների ձեռքով
է ձգտում իրագործել իր ազգային նպատակները:

Նկատի ունենալով Ռուսաստանի ներքին տնտեսական կա-
տաստրօֆիկ վիճակը և նրա միանդամայն խախտւած միջա-
զգային դիրքը, կարելի է անվերապահօրէն պնդել, որ Ռուսաս-
տանի ներկայ մղումը դէպի Արևելք ուրիշ բան չէ, եթէ ոչ յու-
սահատական ջղաձգութիւն, որ բղխում է կատարեալ անզօրու-

թիւնից՝ խոցելու իր տմենամեծ ախոյեանին՝ Անդլիային:

Անգլիան, իր իմպերիալիստական մեծ ծրագլների իրազուժումն անպայմանօրէն ապահովելու համար, հրամայական պէտք ունի ստեղծելու Հայաստանը, մի անգամ ընդմիշտ աղատելու այն՝ ռուսական լուծից ու ռանձգութիւններից և իր աղջեցութեան շրջանի մէջ զցելու այն։ Անգլիական տեսակէտով Հայաստանը վստահելի կլինի միայն այն ժամանակ, երբ հետու կլինի ռուսական ազդեցութիւններից ու դաւերից։ Աւելին. նու պէտք է լինի հակառուսական։ Այլապէս նու միշտ կասկածի տակ կմնայ։ Այդ պարագային Անգլիան միշտ ի վիճակի կլինի դժւարութիւններ և անախորժութիւններ սատնառելու Հայաստանին։ Ռուսական ամեն մի միջամտութիւն հայկական գործերին, հայկական ամեն մի հակում դէպի ուռաները՝ անխուսափելիորէն կործանարար կերպով պիտի անդրադառնայ Հայաստանի քաղաքական բաղդի վրա։

Դնահատութեան տանելով միջազգային ոյժերի մոխարաբերութիւնն ու զօրութիւնը ներկայումս, առանց որեւէ տատանումի մենք մի անգամ ընդմիշտ պիտի պարզենք մեղ համար, որ մեր քաղաքական բաղդի վերջնական որոշումը գերազանցապէս, եթէ չասեմ քացառապէս, կախւած է Անդլիայից։ Ռուսատանի դերը Մերձաւոց Արևելքում և մեսնուսորադէս Հայաստանում վերջացած պէտք է հասարել։ Անգլիան կաշկանդել շրջապայել է Հիւսիսի մէծ պետութիւնն այնպէս, որ նու երկար ժամանակ չախտի եարագանայ այլես որեւէ կշիռ ու ձայն ունենալ Արևելքու։ Անգլիայի արեելեան քաղաքականութեան դլաւոր նպատակներին մէկն էլ այս պահիս ան է, որ Ռուսաստանը թէ ռազմապէս և թէ քաղաքականապէս ռանձանարւի առմիշտ և այլնս միանդամայն անվտանգ գոտուայ Անգլիայի համար։ Այդ նպատակի համար է, որ նու ստեղծուած է Մերձբալթեան պետութիւններ, Հղոր Լեհաստան, Աւելյանա, անդքեզովկառեան ու թերեւ և կովկասեան պետութիւններ։ Այդ նպատակի համար է, որ Ռուսաստանը ուժապառ է արւում։

Բայց Ռուսաստանն այսպէս թէ այնպէս մի մեծ պետութիւն է, որը ապագային կտրող է վիրսահին դասնալ մի ահարկու, սպառնական ոյժ Անդլիայի հանդէպ։

Եւ այսուայ վիճակը չէ որ մտահոգիչ է Անգլիայի համար, այլ վաղւանը։

Պէտք է կանենի գեղըերը, պէտք է նախատեսել միջազ-

գային ոյժերի վտանգաւոր դաստորութեարը և համապատասխան նախազգուշական միջոցներ ձեռք տռնել այժմէն իսկ։ Այս է, «բատիպում է անզլիական հեռատես քաղաքակէաններին մի այնպիսի հաշտութիւն կնքել Անգլիայի համար վտանգաւոր ոյժերի հետ, որպէսզի ստեղծւեն, անեն ու զօրանան այն ոյժերը, որոնց միջոցով հնարաւոր լինի պահպանել քաղաքական հաւասարակշռութիւնը ապագայում։»

Երեք մեծ վտանգաւոր ոյժեր կան, որ անխուսավելիօրէն պիտի դառնան Անգլիայի համար մի անխորտակելի վտանգ, իթէ թոյլ տրւի որ նրանք միանան, եթէ այժմէն իսկ նրանց միացման դէմ պատւարներ չկառուցւին։ Այդ ոյժերն են՝ Գերմանիան, Ռուսաստանն և Թիւրքիան։

Այս երեք ոյժերի միացումը անկարելի, կամ գէթ անմնտս դարձնելու համար՝ Անգլիան ամեն ճիդ է թափում մի կողմից՝ ուժասպառ անելու երեք պետութիւնները թէ ռազմապէս, թէ տնտեսապէս և թէ քաղաքանապէս, միւս կողմից՝ շղթայելու նրանց նոր ազգային պետութեանց երկաթէ օղակով, որը ի վեհակի լինի կասեցնելու ամեն մի քաղաքական վտանգ։

Գերմանիան արդէն օղակւած է այդպիսի պետութեանց շղթայով—Զեխօ-Սլատիա, Ռումանիա, Ռւկրայն, Լեհաստան, Լիտվա, Լատվիա, Էստոնիա։

Ռուսաստանը շղթայւում է Ֆինլանդիայով, Էստոնիայով, Լատվիայով, Լիտվայով, Լեհաստանով, Ռւկրայնայով, Ռումանիայով, իսկ հարաւում անդրկովկասեան ու թերեւ կովկասեան նոր պետութիւններով։

Տաճկաստանը շղթայւում է Արաբիայով, Միջազեաքով, Սիւրայով, Յունաստանով, Հայաստանով, հաւանարար Թիւրդատանով և վիրջապէս մի շարք եւրոպական գաղութներով—Ֆրանսիական Կիլիկիայով, Խոտալական Աղալիայով, Փաստորէն անգլիական Պոլսով ու նեղուցներով։

Աս քաղաքական հոյակապ կառուցւացքը արհեստուկան չէ բնաւ, այլ հիմնուած է, մի քանի ոչ էական շեղումներով, ազգային առողջ և կենսունակ սկզբունքի վրա։ Նորակազմ քոյոր պետութիւններն էլ գերազանցապէս ազգային պետութիւններ են և բոլոր տեեալներն ունեն զարգանալու և զօրանալու Այդ պետութիւններն են որ բաժանում են այսօր Գերմանիան Ռուսաստանից, Ռուսաստանը՝ Տաճկաստանից։

Հայարատանը այդ շղթայի օղակներից մէկն է, որ բաժ-

նում է և բաժանելու է Ռուսաստանը Տաճկաստանից: Դաշնակիցնութեանց և առանձապէս Անգլիայի համար, որ ստեղծում էն Հայկական պետութիւնը այն չափով արժէթեն Հայաստանը, հայկական պետութիւնը այն չափով արժէթեն Հակունենայ, որ չսփով վերջինս հակում չի ունենայ ոչ դէպի Տաճկաստանը, ոչ էլ դէպի Ռուսաստանը:

Երբէք չպէտք է մոռանալ, որ Հայաստանը չի ստեղծում յանուն արդարութեան կամ մարդասիրութեան, այլ միմիայն քաղաքական նպատակներով: Իսկ այդ քաղաքական նպատակն է ծառայել իրեն պատնէշ Ռուսաստանի և Տաճկաստանի կամ համառուստկան և համիսլամական շարժման միջև:

Այդ պատճառով Հայաստանը մի անգամ ընդմիշտ պէտք է դադարի դործիք լինելուց Ռուսաստանի ձեռքում: Ռուսական որ և է ազդեցութիւն չպէտք է լինի այլևս Հայաստանի մէջ և Հայաստանի վրա,

Քաղաքական՝ այն իւրայատուկ պայմաններում, որոնց մէջ կտոռուցւում է հայկական պետութիւնը, միջազգային ոյժերի փոխայարաբերութեան այն շրջանում, երբ վերջնականապէս ձևառուում է Հայաստանի քաղաքական բաղդը, ոչինչ չկայ աւելի մնացակար և, իս կասիմ նոյնիսկ, կործանարար հայ ժողովրդի համար, քան այն կոյր և ստրկամիտ ոռւսասիրութիւնը, որ այս կամ այն ձևով երեան է գտլիս մեր քաղաքական կեանքում:

Վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում մեր բոլոր քաղաքական սխալների, սայթաքումների և յուսախաքութիւնների գլխաւոր պատճառը եղել է մեր ազգային մոլիդին ոռւսասիրութիւնը և ոռւսական օրիենտացիան, որ ահազին մնամներ է տւել մեզ. անգամ վերջին երկու տարիների մեր անկախ գոյութեան ժամանակ:

Եւ եթէ Վրաստանն ու Աղբքէջանը, որոնց միջաղգալին դրութիւնը մեզանից շատ աւելի խախուտ և աննպաստ էր, կարողացան քաղաքական խոշոր նւաճումներ անել և մեզանից շատ աւելի ամրացնել իրենց դիրքը, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ այն էր, որ նրանք հակառակական օրիենտացիա ունեին, — մի բան, որ միանգամայն համապատասխանում էր դաշնակիցների և առանձապէս Անգլիայի շահերին.

Մինչդեռ Հայաստանը կուրօրէն շարունակում էր իր ոռւսասիրական քաղաքականութիւնը, որ մեծամեծ կասկածներ էր յարուցանում Անգլիայի ղեկավար շրջաններում: Դրանից առաջ էր

գալիս այն անվտանութիւնը, որ ունէր Անգլիան դէպի մեր
պետութիւնը! Մեր տրամադրութիւններն ու հրապարակային
արտայայտութիւններն այնպէս էին, որ ակամայօրէն տարակու-
սանք էին յարուցում դրսի աշխարհում, թէ մենք իրօք ձկտում
ենք որևէ ձեռվ միանալ կրկին Ռուսաստանին Ռուսական շոր-
շոփը չէր անցել մեր վրայից, մենք բոլորս էւ հիւանդ էինք
ռուսական հիւանդութեամբ, մեր ազգային մտայնութիւնը կար-
ծես անզօր էր թօթափել իր ռուսական հովերը, մեր ազգային
կամքը չէր գտնում իր մէջ բաւականաչափ վճռականութիւն մի
անգամ ընդմիշտ կտրելու մեր յոյսերը, մեր կապերը Ռուսաս-
տանից:

Այդ բոլորն առաջ էր գալիս մասամբ այն բանից, որ հարիւր
տարւայ ռուսական տիրապետութիւնը շատ ուժեղ դրոշմ է դը-
րել մեր հոգու վրա: Մասամբ էլ այն բանից, որ մինչև այսօր
էլ մենք մեզ պարզ հաշիւ չենք տալիս, թէ ինչ հսկայական
յեղացրջումներ են կատարւել միջազգային ոյժերի փոխյարա-
բերութեանց մէջ, թէ պարտւած, քայլայւած, բաժան բաժան
եղած Ռուսաստանը այլևս ոչ մի դրական դեր չունի կատարե-
լու Մերձաւոր Արևելքում, թէ Հայաստանի բազդը տնօրինող-
ների շարքից դուրս է շպրտւած Ռուսաստանը, եթէ չասեմ
առսիշտ, գէթ շատ և շատ երկար ժամանակով:

Միւս կողմից մենք կարծես տակաւին պարզօրէն չենք գի-
տակցում, որ երկրագնդի այն մասի վրա, ուր գտնւում է Հայ-
աստանը, Անգլիային է վիճակւած վճռական խօսք ասել իվերջոյ,
և որ մեր քաղաքական ապագան կախւած է աշխարհիս այդ հզօ-
րագոյն պետութիւնից:

Մեզ համար պարզ պիտի լինի բացարձակօրէն, որ եթէ
կայ այսօր մի մեծ պետութիւն, որը կամենում է և շահ ունի
ազատ ու անկախ հայկական պետութիւն ստեղծել, Անգլիան է
դա:

Ռուսաստանը միշտ ձգտել է կլանել Հայաստանը, ձեւք
բերել մեր երկիրը առանց հայեցի: Այդպէս է եղել ցարական հզօր
Ռուսաստանը, այդպէս է այսօր և բօլցեիկեան ուժասպառ Ռու-
սաստանը:

Ռուս բօլցեիկները, իսկ նրանց յետեից նաև հայ ստրկա-
հոգի բօլցեիկները կամենում են Հայաստանը ենթարկել նորէն
Ռուսաստանի ազդեցութեան: Այդ անելով՝ նրանք բնաւ չեն
ժամանակում հայ ժողովրդի բարօրութեան մասին, այլ ընդհակ-

ոտկը, նրանք դաշն են կապում հայ ժողովրդի երգւեալ թշնամիների՝ թուրք տաճիկների հետ, որպէսզի հայ ժողովրդի Դիակի վրայով միանան թուրք ազգայնակաների հետ և նրանց միջոցով ամբապնդեն Ռուսաստանի դիրքը հանդէպ Անգլիայի:

Ըուս բօլշեիկները ձգտում են իրենց հայրենադաւ հայ ընկերների միջոցով հայ ժողովրդի բաղդի հետ խաղալ այնպէս, ինչպէս սովոր էին խաղալ ոռւս ցարերը: Փոխւել են ժամանակները, փոխւել են պայմանները, փոխւել են նշանաբանները, հագուստները, գոյները, բայց ոռւսական հայաջինջ ոգին մնում է անսասան: Նրա մահանու շունչը նորէն զգացւում է մեր հորիզոնների տակ այս ծանր օրերին:—

Եւ նրանք, որ ձգտում են պէտի կետնք, դէպի ականութիւն, դէպի անկախութիւն, պիտի ըմբռնենքերջապէս, որ բօլշեիկեան Ռուսաստանը կտտարելապէս անզօք է ոնօրինելու Հայաստանի բաղդը և որ մեր ճակատագիրը կապելթէկուզ ժամանակաւորապէս, մահւան դատապարտւած նրա քաղաքուկան սիստեմի և իմպերիալիզմի հետ, նշանակում է քարտեզա դնել մեր դատը, մեր ազգի ամբողջ ապագան...>

ԲՈԼՇԵԻԻԿԵԱՆ ԱԻԱՆՏԻԻՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Զափականց բնորոշ են բօլշեիկների համար այն խօսքերը, որ Մօսկւայի տրտարին գործոց կօմիսար Զիչերինը նորերս ուղղել էր Անգլիայի արտ. դոր. նախարարին իր վերջին նօտայի մէջ: «Մենք պատրաստ ենք յարգել Անգլիայի շահերը կովկասում», — ասում էր Զիչերինը: Ուրիշ խօսքով՝ բօլշեիկները, որոնք իրենց կօմյունիստներ, սօցիալիստներ են համարում և երեք տարի առաջ այնքան աղմուկ հանեցին, անվերապահօրէն ու կառաղիօրէն պաշտպանելով ազգերի ինքնորոշման բացարձակ իրաւունքը և շառանց աննեկսիայի և կօնտըրուցիայի» սկզբունքը, այսօր պատրաստ են առևտուր անել անգլիացիների հետ ի հաջիք կովկասեան ազգերի:

Սա մի աւելորդ ապացոյց է, թէ բօլշեիկմի անւան տակի թագնւած է ոռւսական իմպերիալիզմը, որ չարաշար պարտւելով անգլիական իմպերիալիզմից, աւելի ձեռնտու պայմաններով հաշտութիւն կնքելու համար վերջինիս հետ՝ կամենում է ծախել իր «պատմական» իրաւունքները ոռւս ցարերի նւաճածաղկերի նկատմամբ, որոնք այնքան մեծ զսհարերութիւններով հաղիւ են կարողացել աղաւել ոռւսական անարդ լուծից:

Բոլշեկները պատրաստ են յարդել ոչ թէ ինքնորոշութզ աղպերի իրաւունքները Կովկասում, այլ Անգլիայի շահերը Կովկասում։ Աւելի պերճախօս խոստավանութիւն չէր կարող լինել նըսնց կողմից։

Սակայն, եթէ այսպէս թէ այնպէս կարելի է զեռ ըմբռնել ուսւո բոլշեկների այս քաղաքականութիւնը մանր աղպերի հանդէպ, որ, ճիշտ է, ոչ մի առնչութիւն չունի սօցիալիզմի և սոցիալիստական սկզբունքների հետ, բայց թելադրում է ռուսական հայրենասմբառութիւնից, — ապա Բնչութէս բացատրել նայ բոլշեկների աղգակործան ընթացքը։ Եւ իրաւ. մինչ ոռւս բոլշեկները պատրաստ են ծախելու ուրիշ աղպերի իրաւունքներն ու շահերը, հայ բոլշեկները առետուր դիտեն անել միայն իրենց աղջի իրաւունքներով ու շահերով։

Որ հայ բոլշեիկները, փորձ անելով Հայաստանում հաստատելու իրենց իշխանութիւնը, վաճառել են իրօք հայ ժողովրդի շահերն ու իրաւունքները և այդպիսով, զիտակցաբար թէ անդիտակցաբար, վտանգել են ուզում ոչ միայն հայ ժողովրդի քաղաքական տպադան, այլ և նրա ֆիզիկական ապագան, գոյութիւնը, — այդ արդէն կասկածից վեր է տյոօր, երբ մեր ձեռքուժը բազմաթիւ ապացոյցներ կան։ Հայ բոլշեիկները կրկնակի վաճառք են կատարել. նրանք ծախել են Հայաստանը մի կողմից ոռւսներին, միւս կողմից՝ թուրքերին։

Մէկդի թողնելով հայ բոլշեիկների յանցաւոր կտպերը մեր ժողովրդի աղատ և անկախ քաղաքական գոյութեան թշնամի ներքին հակապետական տարրերի և մեր ժողովրդի ֆիզիկական գոյութեան սպառնացող համիսլամական արտաքին ոյժերի հետ, վերցնենք իրերի առարկայական դրութիւնը։ Այս կերպ աւելի անաչառօրէն կարելի պիտի լինի պարզել հայ բոլշեիկների կտարած ոնիրը։

Ով քիչ շատ ծանօթ է բոլշեիկեան Ռուսաստանի քաղաքական հրարդիսային վիճակին, նրա տնտեսական ջանպատճելի քայլայման, նրա միջաղգային աննախընթացօրէն խախուտ դիրքին, նա մի վայրկեան իսկ չի կարող իրեն թոյլ տալ սպասելու, որ այսօրւայ Ռուսաստանը ի վիճակի է որևէ քաղաքական, ռազմական կամ նոյնիսկ անտեսական օգնութիւն հացնել Հայաստանին։ Ռուս բոլշեիկները, զուրկ չմինելով իրականութեան ըգայցումից, շատ լաւ են զիտակցում, որ իրենց ներկայ ոյժերով իրենց իշխանութիւնը երբէք չպիտի կարողանան տեւականօրէն

հաստատել Անդրկովկասում և մասն ւորապէս Հայաստանում:
թէ Անդրկովկասը և թէ յատկապէս Հայաստանը նրանց համար
այն չափով արժէք ունեն, որ չափով որ, այս երկրներում՝ Խլըր-
տումներ և անկարգութիւններ յարուցանելով, նրանք կարող են
անախորժութիւններ պատճառել Անգլիային և այդ միջոցով հար-
կադրել վերջինիս իրենց հետ աւելի նպաստաւոր հաշտութիւն
կնքել: Իսկ թէ այդ խլըրտումների և անկարգութիւնների հետե-
ւանքով այդ երկիրների ժողովուրդները կարող են միծապէս
տուժել և նոյնիսկ բնաջինջ լինել, այդ միանգամայն չի հետա-
քաքրում թօլշեիկների անւան տակ գործող ոռւս իմպերիալիստ
քաղաքագէտներին: Ոռւս թօլշեիկները շատ լաւ զիտեն, որ ի-
րենց դաւերն Անդրկովկասում և առհասարակ Մերձաւոր Արեել-
քում էպիզոդներ են, անցողական դէպքեր, պարզապէս քաղա-
քական աւանտիւրաններ, որոնց նպատակը միանգամայն օտար
է և նոյնիսկ հակառակ անդրկովկասեան ազգերի շահերին: Բայց
նրանք չեն հրաժարւում այդ աւանտիւրաններից, որովհետեւ այդ
պահանջում է ոռւս ազգի, ոռւս պետութեան, ոռւս իմպերի-
ալիզմի շահը: Սակայն, եթէ ոռւս ազգի և պետութեան շահերը
ապահովեն ուրիշ ճանապարհներով, ուրիշ եղանակներով, այն
ժամանակ ոռւս թօլշեիկները պատրաստ կլինեն յարդել Անդր-
իի իրաւունքներն ու շահերը կովկասում և Հայաստանում:

Ի՞նչ է ուրեմն հայ թօլշեիկների արածը մեր երկրում. ոչ
այլ ինչ, եթէ ոչ զործիք ծառայել ոռւս թօլշեիկեան իմպերիալիստ-
ների ձեռքում հայ ժողովրդին միանգամայն օտար նպատակների
համար: Այդ դաւաճան դերը կատարելու համար հայ թօլշեիկնե-
րը հարկաւ ստացել են ոռւմներից տատա վարձատրութիւն:

Սակայն, եթէ հայ թօլշեիկների ընթացքը ոռւմների հան-
դէ կարող է դեռ որևէ կաղափարական երևոյթ ունենալ, ապա
այդ երևոյթից միանգամայն զուրկ է նրանց քաղաքականու-
թիւնը թիւրքերի հանդէպ: Այդ «քաղաքականութիւնը» բարիս
բուն իմաստով դաւաճանութիւն է բացարձակապէս:

Ամբողջ աշխարհին յայտնի է այն յանցաւոր կապը, որ
գոյութիւն ունէր որոշ ժամանակից ի վեր ոռւս թօլշեիկների և
օսմանիան ջարդարար փաշաների միջև: Նուրի և Խալիլ փաշա-
ները չեն էլ թագցնում, որ նրանք թօլշեիկների հետ են: Նրանց
յանդուզն զաւերը Դաղստանում, Ադրբէջանում, Ղարաբաղում,
Զանդեղուրում, Նախիջևանում ոչ մի տարակոյս չեն կարող
թողնել, թէ տաճիկ ջարդարները զանազան քաղաքական խա-

ղերի միջոցով ձգտում են իրականացնել նոյն հայաջինջ ժըտդերը, որ նրանք Տաճկաստանում կատարելուց յետոյ հրամայական կարիք էին դզում աւարտել Ռուսահայաստանում:

Հայ ժողովրդի և քաղաքական և ֆիզիքական գոյութիւնն անհանդուրժելի է համաթրքական, համիսլամիստական իմպերիալիզմի տեսակէտով։ Հայ ժողովրդի կատարեալ բնաջնջումը անհրաժեշտ է միանգամ ընդ միշտ վերացնելու համար այն վտանգը, որ խանգարում է համաթրքական մեծ նպատակների իրադրժման։ Հայ ժողովրդը պէտք է ամբողջովին զոհւի, որպէսզի թըրութիւնը աղատ շունչ քաշի, ապրի իր նախկին սանձարձակ և կուլտուրաւեր կեանքով։

Տաճկական այս ծրագիրը վիժեց՝ շնորհիւ Տաճկաստանի պարտութեան, Բայց տաճկական ղեկավար տարրերը բնաւ չըհրաժարւեցին այդ ծրագրի իրագործումից։

Ստեղծւած քաղաքական նոր պայմաններում պէտք էր միայն պայքարի նեւերը փոխել։ Եւ երիտասարդ թիւրքերը, հայաջինջ ծրագրի հանճարեղ հեղինակները, փոխեցին Տաճկաստանում իրենց անունը և ծայր տւին ազգայնական մի «նոր» շարժման «Միլլի» անունով։ Այդ պէտք էր դաշնակիցներին մաւրեցնելու համար։

Ռուսաստանի սահմաններում նրանց ազենտները դարձան բուհեկները, որպէսզի այդ եղանակով կարողանան հեշտութեամբ խարել ռուսներին։ Այդ էլ պէտք էր ռուսների ոյժից օգտւելու համար։

Աժիսներ շարունակ նրանք կոիւ ժղեցին Աղբբէջանում Մուսաւաթի դէմ, որ, իրենց կարծիքով, բաւականաչափ վճռական և կտրուկ չէր իր հայաջինջ քաղաքականութեան մէջ։ Պէտք էր հայերին մի մահացու հարւած հասցնել նաև Անդրկովկասում, մինչդեռ Մուսաւաթը հրապարակ հանեց այդ գործում իր կատարեալ ապիկարութիւնը, անզօրութիւնը։ Տաճկաստանն իր ներկայ օրհաստական վիճակից կարելի է հանել հեշտութեամբ, իթէ վերանայ մէջտեղից անիծեալ Հայաստանը և հայկական հարցը, և Աղբբէջանն անմիջապէս միանայ Թուրքիային։ Օսմաննեան ուժերն այն ժամանակ կկրկնապատկւեն, կեռապատկւեն, և նզովեալ Անտանտը, կատարւած իրողութեան առջև դրւելով, կամայթէ ակամայ ստիպւած պիտի լինի քաղաքականապէս նւիրագործել ստեղծւած փաստական դրութիւնը։ Ազատ և անկախ Աղբբէջան պէտք չէ. նա պէտք է Տաճկաստանին այն չափով,

57639

որ շափով որ նրա ռդնութեամբ Տաճկաստանը պիտի վերականցնէի և զօրանայ: Աղբբէջանը պէտք է ծառայի Տաճկաստանի շահերին, դառնայ նրա գործիքը, այլապէս նրա գոյութիւնը որևէ իմաստ չունի: Եթէ Աղբբէջանը՝ Տաճկաստանի քաղաքական բաղդի որոշման այս ճակատագրական վայրկեանին՝ չկարողացաւ որևէ իրական օգնութիւն ցոյց տալ վերահաս վանգից իր մայր Հայրենիքն ազատելու համար, այն ժամանակ տւելորդ է նոյնիսկ նրա գոյութիւնը:

Այս նկատառումներից ելնելով, տաճկական փաշաներն իրենց ագենտների հետ միասին ամիսների անդուլ աշխատանքով կազմակերպեցին այն բոլշևիկեան—համիսլամական շարժումը, որը նախապատրաստեց նորերս Բագրում տեղի ունեցած «խորհրդային յեղաշրջումը»:

Անտարակուսելի է այժմ, որ այդ «յեղաշրջումը» ամիսներ առաջ մտածւած ու ծրագրւած մի «յեղաշրջում» էր: Անտարակուսելի է նոյնիս, որ այդ «յեղաշրջումը» կատարւել է թուրքական բոլոր կուսակցութեանց հաւանութեամբ և մասնակցութեամբ:

Բաւական է մատնանշել այստեղ միայն այն բնորոշ փաստը, որ Աղբբէջանի իշխող կուսակցութիւն՝ Մուսաւաթը, Հնայելով, որ հիւսիսից արշաւում էին բոլշևիկեան բռնակները և ըսպահնում Աղբբէջանի անկախութեան, փոխանակ իր ոյժերը կենարոնացնելու հիւսիսոյին ճակատում, իր բոլոր զօրքերը ուղարկեց դէպի Ղարաբաղ և Զանգեզուր: Եւ որքան աւելի էր ուժեղանում բոլշևիկեան վտանգը, այնքան աւելի մեծ եռանդով ու անվերապահութեամբ մուսաւաթական կառավարութիւնը յարձակողական նախապատրաստութիւններ էր տեսնում հայ ժողովը՝ և Հայաստանի դէմ, Ղարաբաղի և Զանգեզուրի ճակատում:

Աղբբէջանի նոր, բոլշևիկեան կառավարութիւնը, որը ծընաց Հարդարար Զիւանշիր խանի կարինէտում, առոնց որեէ դիմադրութեան Մուսաւաթի կողմից, կոչւած էր միայն օգտւելու Մուսաւաթի նախապատրաստական աշխատանքներից և աւելի վճռական եղանակով իրագործելու այն, ինչ որ չէր յաջողւել Մուսաւաթին,—այսինքն իրագործել տաճկական ծրագիրը—կոտորել հայերին, և Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով միացնել Աղբբէջանը Տաճկաստանի հետ:

Որո՞նք էին այն նոր սիջոցները, որոնցից զուրկ էր Մուսաւաթը որոնց օգնութեամբ այսօր Աղբբէջանի «խորհրդային»

նոր կառավարութիւնը յոյս ունէր իրազործելու տաճկական վաղեմի ծրագիրը հայ ժողովրդի զոյութեան դէմ, Այդ միջոցներն էին նախ՝ այն ռազմական ուժերը, որոնք պիտի դային բոլշևիկեան Ռուսաստանից, համաձայն ռուս-տաճկական զաղանի դաշնագրի, և երկրորդ՝ այն ներքին յեղաշրջումը, որ նրանք յոյս ունէին առաջ է երելու Հայաստանում իրենց կաշառած մարդկանց միջոցով:

Ռուս բօլշևիկեան ոյժերը չեկան Աղբբէջան ծառալելու տաճկական շահերին, Նրանք եկան այն չափով, որ չափով որ այդ պէտք էր Բագւից նաւթի արտահանութիւնը դէպի Ռուսաստան ապահովելու համար: Աւելին թերեւ նրանք երբէք էլ լուրջ մտադրութիւն չեն ունեցել անելու, Խլրառումներ, անկարգութիւններ, բարդութիւններ առաջ բերել անդրկովկասեան պետութեանց մէջ—ի՞նչու չէ: Բայց ռազմական ոյժեր բերել,—ոչ: Իսկ խոսառումներ անշառշառ ուսւ բօլշևիկները տւած էին տաճիկներին՝ վերջիններիս իրենց կողմը զրաւելու և իրենց նպատակների համար օգտագործելու դիտաւորութեամբ: Սակայն լեհական ճակատն ու բօլշևիկեան Ռուսաստանի ներքին խախուտ վիճակը թոյլ չտւին, որ ոռւսները լայնօրէն կատարէին իրենց խոսառումները, եթէ երբէք նրանք լրջօրէն տրամադրիր եղել են այդ անելեւ այդպիսով կամայ թէ ակամայ խարեցին տաճիկ-թիւրքերին:

Յեղաշրջումը Հայաստանում պիտի կատարէին հայ բօլշևիկները՝ համաձայն Աղբբէջանից եկած հրահանգների:

Ի՞նչ տարրերի վրա կարող էին յենւել և պիտ յենւէին այդ դաւաճանները,

Առաջին՝ այն մոլորւած ու այլասերւած երիտասարդների վրա, որոնք թէե զուրկ չեն զաղափարականութիւնից, բայց հիւանդ են ոռւսական ինտելիգենցիայի հիւանդութեամբ, հոգու հիւանդութեամբ:

Երկրորդ՝ ծագումով հայ, բայց ոկով ուսւ տարրերի վրա, որոնց համար Հայաստանը և հայ ժողովուրդը խորթ են, որոնք Հայաստանի վրա նայում են, որպէս մի ժամանակաւոր, յաճախ ակամայ կայանի վրա, կամ որպէս մի կթան կովի վրա, և որոնք, երբ կեանքը Ռուսաստանում խաղաղւի, առանց անդամ յետ նայելու պիտի փախչեն Ռուսաստան: Դրանք կամ անկախ Հայաստանի դէմ են, կամ լաւագոյն դէպում, անտարբեր են: Դրանք ուսւ իմպերիալիզմի կամայ թէ ակամայ աղենտներն են: Երրորդ՝ այն ոչ հայ տարրերի վրա, որոնք չեն կարող

կամ չեն կամենում հաշտւել Հայաստանի անկախ գոյրւթեան հետ։ Ռուսները, որովհետև երէկ տիրող էին, իսկ այսօր տանել չեն կարող իրենց արդի հպատակ վիճակը. դրանք ատում են Հայաստանը, դրանք ձգտում են դէպի հիւսիս։ Թուրքերը, որովհետև նոյնպէս երէկւայ իշխողի հոգեբանութիւնն ունեն, հայի լուծը աւելի է նրանց համար ատելի, քան որևէ այլ բան աշխարհում. դրանք ձգտում են դէպի Տաճկաստան. դրանք պատրաստ են ոչ միայն քաղաքականապէս վերացնել Հայաստանը, այլ և ֆիզիկապէս ոչնչացնել հայ ժողովուրդը։

Ահա այս տարրերը շատ նպաստաւոր հող են ներկայացընում բօլշևիկ դաւաճանների համար, որոնք յոյս ունէին իրենց մութ նպատակների համար օգտւել նաև մեր ժողովրդի մէջ հացի պակասից և ֆինանսական ծանր կացութիւնից ծայր տւած դժգոհութիւնից։

Յեղաշրջման գործը Հայաստանում դիւրացնելու համար պէտք էր արաւորին ուժերի մի գրոհ։ Բայց որովհետև ոռւս բօլշևիկեան զօրքերը չեին կարող մօտենալ Հայաստանին, պէտք էր աղդել Հայաստանի իշխող կուսակցութեան վրա դէթ սպառնաւեներով, որպէսզի կարելի լինէր այդ կուսակցութեան շարքերում շփոթ ու խուճապ առաջացնել և այդ ճանապարհով ստիպել Հայաստանի կառավարութեանը, որպէսզի նա առանց դիմադրութեան զիջէ իր դիրքերը բօլշևիկ անւան տակ թագնւող դաւաճաններին։ Այդ սպառնալիքի դերը կոչւած էին կատարելու այն երկու վերջնագրերը (ուլտիմատումները), որ իրար յետելից ներկայացրին Բագրի «նոր» տէրերը և բօլշևիկների կովկասեան ճակատի ներկայացուցիչները։

Ոչ Ադրբէջանը կարող էր մեր դէմ մեծ զօրքեր ուղարկել, ոչ էլ ոռւս բօլշևիկները։ Խազմական ոյժերի փոխյարաբերութիւնը Անդրկովկասում մնում էր նոյնը։ Ուստի թէ թուրքական և թէ ոսւսական սպառնալիքների յետեռում չէր կարող լինել որ և է լուրջ, իրական վտանգ, որի վախի տակ Հայաստանի կառավարութիւնը հարկադրւած զգար իրան անձնատուր լինելու։

Եւ եթէ Ադրբէջանի և ոռւսների «սօվետական» սպառնալիքները չմոլորեցըին և խուճապի չմատնեցին մեղ, սակայն նըրանք եղան այն ազդանշանը, որից սիրտ տուն մեր ներքին դաւաճաններն իրենց սկ գործը սկսելու համար։

Եւ այսպէս բռնկւեց բօլշևիկեան ապստամբութիւնը Հայաստանում։

եւ քանի որ արդ սպատամբութիւնն իրօք թելաղբւած էր՝ զըսից և զեկավարւում էր դրսից, նա պէտք է և ծառայէր գըրսի նպատակների։ Այդ նպատակների մէջ ամենակարևոր տեղը բոնում էր Տաճկաստանին անմիջական օգնութիւն հասցնելու խնդիրը։ Մայիսի 10-ին դաշնակիցները պիտի ներկայացնէին տաճիկներին հաշտութեան դաշնագիրը, ըստ որի Տաճկաստանը պիտի բաժան-բաժան լինէր։ Տաճկաստանից բաժանւող մասերից մէկն էլ Հայաստանն է։ Հայաստանում խլրտումներ առաջ բերելով և դաշնակցական կառավարութիւնը տապալելով, կարելի էր այնպիսի մահացու հարւած հասցնել այդ երկըն, որ այլևս նրա վերականգնման մասին խօսք չլինէր։

Բօլշևիկեան յեղաշրջումը Հայաստանում պիտի լինէր այն նոր, չափազանց էական փաստը, որ բոլորովին պիտի խառնէր դաշնակիցների խաղաքարթերը Մերձաւոր Արևելքում, և պիտի սուիլէր նրանց հիմնովին վերաքննել Սան-Ռէմօի մէջ մշակւած տաճկական դաշնագիրը ի նպաստ Թիւրքիայի։

Բօլշևիկեան Հայաստանը հարկաւ չպիտի կարողանար պահպանիլ իր սահմանները, Դարաբազն ու Զանգեզուրը պիտի տնցնէին առանց դժւարութեան Աղբքէջանի թուրք «կարմիր» բանակի ձեռքը, Կարմիր Նախիջնանն ու Զանգիրասարը պիտի գրաւէին հեշտութեամբ երևանը, «կարմիր» Տաճկաստանն ու Աղբքը էջանը պիտի միանային։ Եւ չորս կողմից օղակւած փոքրիկ, շատ փոքրիկ բօլշևիկեան Հայաստանը պիտի արիւնքամլինէր ներքին քաղաքացիական կուրից, որ պիտի լինէր անխուսափելի հետևանքը բօլշևիկեան յեղաշրջման։

Եւ մի գեղեցիկ օր, երբ այլևս պէտք չէր լինի «կարմիր» կօմեդիայի, Աղբքէջանի և Տաճկաստանի արիւնարբու վարիչները դէն պիտի շարտէին կարմիր դրօշակը ու կարմիր զարդարները՝ իրենց միւս գրպանից հանելու և նորէն բարձրացընելու համար համիսլամական այն սրբազան կանաչ դրօշակը՝ որի վրա նրանք երդւել են միշտ և որին նրանք հաւատարիմ են եղել և «կարմիր» դրօշակի օրով։

X

ԲՕԼՇԵԿԻԶՄԻ ՌԵԱԿՑԻՈՆ ԲՆՈՅՑՔԸ

Ամեն մի յեղաշրջման նշանակութիւնն ու էութիւնը կարելի է չափել այն ոէալ ուժերով, որոնց միջոցով կատարւում է յեղաշրջումը և որոնց վրա յենւում է կամ յենւելու է նրա իշխանութիւնը։

Անշուշտա ամեն մի յեղաշրջում ունի իր ներքին գաղափառ բական մզումներն ու տրամաբանութիւնը, իր ուրոյն ձևերն ու նշանակութիւնը, որոնք չեն կարող իրենց ինքնայտուկ դրաշմը չդնել իրերի ընթացքի վրա։ Սակայն յեղաշրջման հետևանքների վրա ամենավճռական ազդեցութիւնն ունին այն սէալ ուժերը, որոնք կոչւած են իրագործելու յեղաշրջման նպատակները։ Այդ ուժերից է ի վերջոյ կախւած յեղաշրջման բովանդակութիւնն և վախճանական ուղղութիւնը։

Այսպէս, օրինակ, Թուսաստանի սօվետական յեղաշրջման բոլշևիկ ղեղկավարները հրապարակ եկան սօցիալիստական նշանաբաններով և զուտ բանւորական քաղաքական նպատակներով։ Իրենց կատարած յեղաշրջման նրանք աւին իրենց կամեցած ձեր, բայց նրանց առաջնորդած յեղաշրջման բովանդակութիւնն ու վախճանական ընթացքը միանդամյն հակառակ դառն եկաւ նրանց սկզբնական նպատակներին, որովհետեւ այն սէալ ոյժերը, որոնց միջոցով նրանք հարկադրւած էին պաշտպանել իրենց իշխանութիւնն և իշխանութեան նոր ձները, բազկացած էին պերազանցապէս դիւդոցիներից, իսկ գիւղացիները հարկաւ չէին կարող յենարան լինել զուտ բանւորական, ուրուկառական իշխանութեան համար, չէին կարող կոյր դործիք լինել զուտ պրոլետարական նպատակների համար։

Մի ուրիշ, մեզ համար աւելի հրահանդիչ օրինակ կարող է լինել սօվետական յեղաշրջումը Բազւում 1918 թ. մարտ ամսին։

Այն ժամանակ, ինչպէս կյիշէ ընթերցողը, առասական զարքերի վերջին մեացորդներն էին փախչում Անդրկովկասից, տաճկական բառական բառական և հորդաները արշաւում էին մեր սահմանների վրա, ամբողջ թրօնութիւնը կովկասում ոտքի էր կարգնել, և բովանդակ հայութեան ֆիզիքական գոյութիւնը վատանգւած էր մահացու կերպով։ Ա. զպիսի սղբերգական դայմաններում Բազւի մէջ փակւած հայ ուղմական ոյժերը՝ աւելի յաջաղ կերպով թիւրքի դէմ պաշտպանւելու համար՝ միացան ուստ բոլշևիկների հետ, որովհետեւ այդ միջոցով էր միայն, որ հայութիւնը կարող էր կապ պահպանութեական Հիւսիսի հետ և այնտեղից թերևս ուղմական օգնութիւն ստանալ։

Հայկական զօրբերը, որոնք իրենց մնջող մեծամասնութեամբ դաշնակցականներ էին, հարկաւ ոչ մի գաղափարական հակում չունէին դէպի բոլշևիզմը։ Բայց նրանք առանց որևէ դժւարութեան ենթարկւեցին Բագրի սօվետական նոր իշխա-

նութեան, հենց որ Հ. Յ. Դաշնակցութեան Բագւի Կենտրօնական
Կոմիտէն և Բազւի Հայոց Աղջային Խորհորդը համապատասխան
հրահանգ տւին: Ինչու որովհետեւ հայ ժողովրդական զանգւած-
ների գիտակցութեան մէջ բօլշևիկեան իշխանութիւնն այն ժա-
մանակ Բազւում կոչւած էր կատարելու այն մեծ գործը, որ
կատարում էին թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը և թէ Հայոց Աղջային
Խորհորդը: Այդ մեծ գործը կոիւն էր թրբական վահանգի դէմ:

Բօլշևիկները, թէ ոռւս, թէ հայ, միամտութիւն ունեցան
կարծելու, որ, եթէ հայկական զօրքերն այդքան հշշութեամբ
ենթարկեցին իրենց իշխանութեան, դա նշանակում է, թէ
նրանք բօլշևիկներ են արդէն և թէ կարելի է նրանց միջոցով
անել այն ամենը, ինչ որ իրենց՝ բօլշևիկներին է հաճելի: Նաս-
տատելով իրենց իշխանութիւնը գերազանցապէս Հ. Յ. Դաշնակ-
ցութեան ուղմական ոժերի օգնութեամբ, բօլշևիկները մանկա-
մաօրէն երեակայեցին, թէ կարող են նոյնիսկ Հ. Յ. Դաշնակցու-
թեան հետ էլ վարւել այնպէս, ինչպէս վարւել էին Մուսաւաթի
հետ: Նրանք չըաշւեցին անգամ յայտարարելու իրենց պաշտօնա-
կան օրգանի բերանով, թէ ջախջախւած է Մուսաֆաթը, այժմ
էլ հերթը հասիլ է Դաշնակցութեան:

Այս բոլորը հետեւանք է այն բանի, որ բօլշևիկներն աւելի
մեծ կարևորութիւն են տալիս ձեին, քան բովանդակութեան, որ
նրանք երբէք չեն թափանցում իրեքի և երեսյթների խորքը:
Այդ պատճառով 1918 թ. Բազւում նրանք չհասկացան, որ նրանց
ռազմական իշխանութիւնը պոյութիւն ունի միմիայն Հ. Յ.
Դաշնակցութեան բարի կամեցողութեամբ: Զկայ այդ կամեցո-
ղութիւնը, չկան և նրանք, բօլշևիկները:

Եւ իրաւ. երբ պարզւեց, որ սօվեաական Ռուսաստանը
ի վիճակի չէ բաւականաշափ ռազմական օգնութիւն հասցնելու
Բագւի տեղական ոյժերին՝ յետ մղելու համար թուրք
ամենակալ ոն գրոհը, Հ. Յ. Դաշնակցութիւնն ամենայն դիւրու-
թեամբ տապալեց բօլշևիկների իշխանութիւնը Բազւում և զի-
նաթափ արեց դուռ բօլշևիկեան ոյժերը:

Եթէ մենք դառնանք այժմ Աղբբէջանում նորերը ուեղի
ունեցած յեղաշրջման, կաեօնենք, որ այդ յեղաշրջումը ըստ
էութեան շատ քիչ է տառըերւում 1918 թ. մարտին կատարւած
աօվիտական յեղաշրջումից: Միայն դերերն են փոխւել: Այն ժա-
մանակ հայերն էին, որ թիւրքերի դէմ կռւելու համար գիմել
էին սուս բօլշևիկի օգնութեան: Խօկ այս անգամ թուրքերն են,
էին սուս բօլշևիկի օգնութեան:

որ հայի գէմ կռւելու համար դիմել են ոռւս բօլշեվիկի օգնութեան երկու պէտքումն էլ ոռւս բօլշեվիկեան իշխանութիւնն այն չափով է ցանկալի և կայուն, որ չափով որ նա ծառայում է իր վրա դրւած պարտականութեան, իր առջե դրւած նորատակին:

Եւ ինչպէս որ 1918 թ. հայերը յուսախար եղան և քշեցին բօլշեվիկներին, այնպէս էլ այժմ թուրքերն անխուսափելիօրէն պիտի յուսախար լինեն «սօվետական» իշխանութիւնից և քշեն բօլշեվիկներին: Որովհետեւ թէ 1918 թ., թէ այս տարի ոէալ ոյժը Բազւում բօլշեվիկներին հարազատ ոյժ չէ: Որովհետեւ թէ 1918 թ. և թէ այս տարի բօլշեվիկները կոչւած են Բազւում իրենց համար միանգամայն օտար նորատակներ իրազործելու: Եւ ճենց որ պարզէի, թէ բօլշեվիկեան այժմեան իշխանութիւնը Աղրբէջանում ի վիճակի չէ աւելի մեծ յաջողութեամբ կատարելու այն, ներկայ դէպքում, հակահայկական գործը, որի համար նա հաստատւած է, այդ իշխանութիւնը մի վայրէիան իսկ չպիտի կարողանայ այլևս գոյութիւն ունենալ:

Սօվետական յեղաշրջումն Աղրբէջանում արդիւնք չէր այդ երկրի ոէալ ուժերի փոխարարելութեան հիմնական փոփոխութեան, այլ միայն և միայն բաղաքական որոշ կօմբինացիաների: «Կարմիր» Աղրբէջանի ոէալ ուժերի մտայնութիւնը, քաղաքական շահերն և սօցիալական մզումները մնացին նոյնը, ինչ որ էին «կանաչ» Աղրբէջանի մէջ:

«Կարմիր» դրօշակը Աղրբէջանին պէտք է ոչ թէ ներքին, այլ արտաքին կործածութեան համար, նա պէտք է դրսի աշխարհը մոլորեցնելու, խարելու համար. նա պէտք է ոչ իսլամական ժողովրդների մտքի մէջ քառ, խառնաշփութութիւն յառուցելու համար: «Կարմիր» դրօշակը Աղրբէջանի համար մի հասարակ լաթ է, որ դէն պիտի շպրտի, ճէնց որ նրա կարիքն այլևս չզգացւի, և նոյնքան դիւրութեամբ ու արագութեամբ, որքան նա բարձրացւեց այդ իսլամական երկրի վրա: Շուշում Աղրբէջանի նորընծայ բօլշեվիկները կազմել են արդէն մի «յեղափոխական» կօմիտէ, որի նախագահն է ամբողջ Ղարաբաղին քաջ յայտնի դահճապետ Սուլթանօվր: Այդ կօմիտէն արդէն մի կոչ է հրատարակել՝ ուղղւած Ղարաբաղի հայ աշխատաւոր պիւղացիութեան: Սուլթանօվի «յեղափոխական» կօմիտէն առաջարկում է հայ զիւղացիներին՝ տապալել գաշնակցական կառավարութիւնը, հաստատել «սօվետական» իշխանութիւն և հաշտու-

թիւն կնքել «կարմիր» թուրք աշխատաւորութեան հետ:

Մենք գիտենք արդէն, որ երբ ևս վետական» յեղաշրջում
տեղի ունեցաւ Բազւում, Աղոթէջանի նոր կտուավարութեան ա-
ռաջին քայլն եղաւ՝ Հայաստանի ղեմ անմիջապէս պատերազմա-
կան զործողութիւններ սկսելու սպառնալիքով՝ ովանանջել Ղարա-
բաղի և Զանգեզուրի յանձնումը Աղոթէջանին։ Մեղ ծանօթ է և
մի ուրիշ սպառնալիք, որ եկտէ Հիւսիսից,

ի՞նչ էր այդ սպառնալիքների բուն նպատակը, Ահարեկում
խառնաշվութութիւն, խուճապ առաջացնել Հայոստանում և դիւ-
րացնել ալղակիսով մեր կառավարութեան տապալումը «Ներքին»
բօլշեվիկների միջոցով:

Սակայն այժմ, երբ թէ «ներքին» և թէ «արտաքին» ըօլ-
շնիկների համար պարզւեց, որ սպառնալիքը չի հասնում իր նը-
պատակին, այլ ընդհակառակը, աւելի ևս սեղմում է Հայաստանի
կառարարութեան հաւատարիմ շարքերը, նրանք կամենում են
ուրիշ, աւելի «խաղաղ» ճանապարհով աղդել հայ, ժողովրդի վրա:
թէ Աղրբէջանը, թէ Հիւսիսը սեղ հետ հաշտութեան բանակցու-
թիւնների մէջ են մտնում, «Կարսիր» թուրքերը, ինչպէս, օրի-
նակ, Շուշւայ ռկարմիր» կօմիտէն՝ Սուլթանովի գլխաւորութեամբ,
զառան մորթի հագած զայլելի նման հաշտութեան ձեռք են
մեկնում Հարաբաղի հայ գիւղացիներին, խնդրելով միայն մի
փոքրիկ բան անել—տապալել անիծեալ դաշնակցականներին, ո-
րոնք իրենց հանգիստ չեն տալիս:

Բայց թող չմռլորւեն հայ ժողովրդի և Անկախ ու Միացեալ
Հայաստանի արթուն հսկիչները: Բօլլեիկ անւան տակ թագնւած
Թուրքերը, ինչպէս նաև ողւմները, ամեններն չփոխւեցին մի եր-
կու շաբաթւայ ընթացքում, ինչպէս այն ժամանակ, երբ նրանք
մեզ սպառնում էին պատերազմով, այնպէս էլ այժմ, երբ նրանք
«հայութեան» ձեռք են մեկնուծ մեզ, նրանք երդւեալ թշնա-
մինեցն են Անկախ Հայաստանի և հայ աշխատաւոր ժողովրդի:

Դասերա լին սպառնալիքները, ինչպէս և հաշտութեան բա-
նակցութիւնները տարբեր ձևեր, միջոցներ են միայն նոյն հար-
աջինչ նպատ սկին հասնելու համար: Թշնամին ձգտուժ է, ինչ
գնով էլ լինի, ինչ միջոցով էլ լինի, կործանել Անկախ և Միա-
ցել Հայաստանը, բնաջինջ անել հայ դեմոկրատիան, որովհետե-
ղեալ Հայաստանը, բնաջինջ անել հայ դեմոկրատիան, որովհետե-
ղեալ Հայաստանը կանգնած է թէ ոռւս բօլշևիկի, թէ թուրք «բօլշևիկ»
— ճանապարհի վրա:

Թողով ոչ ոք միամիտ հաւատար. Հաւատար, որ անգամ կնքւած

հաշտութիւնը բօլշեիկ հեռչւած թշնամու հետ պիտի իրօք բերի-
մեր երկրին խաղաղութիւն։ Ըսդհակառակը, երբ բօլշեիկներ
շկային Բագւում, Արդրկովկասում կար միայն մի պատերազմ—
հայ-Թուրքական։ Բայց բաւական էր, որ նրանց գրոշակը ծա-
ծանւէր Ազրբէջանում, և մենք ունեցանք մի նոր պատերազմ
և թուրք—վրացական։ Եւ կարելի է առանց վերապահութեան
պնդել, որ, եթէ բօլշեիկները որևէ յաջողութիւն ունենան Հաւ-
յաստանում կամ Վրաստանում, մենք պիտի ունենանք Անդր-
կովկասում և մի երրորդ պատերազմ՝ հայ-վրացական։ Վերջապէս,
բօլշեիկները չեին լինի բօլշեիկ, եթէ ոյդ բոլոր ճակատների
վրա չաւելացնէին նաև ներքին ճակատներ մեր դժբախտ ժողո-
վուրդների ծացում։ Չէ որ նրանց նշանաբանն է—քաղաքացիա-
կան պատերազմը, այսինքն ներքին եղբայրական պատերազմը։

Արիւն, անվերջ արիւն, ծով արիւն պիտի հոսի Անդրկով-
կասում, որպէսզի յագենայ Ռուսաստանը, որպէսզի յագենայ
Տաճկաստանը։ Որովհետեւ միայն փոքր ազգերի անկախութեան
ոտնահարման և փոքր ազգերի ֆիզիքական բնաջնջման արջոցով
է, որ թէ Ռուսաստանը և թէ Տաճկաստանը ապահովւած պիտի
տեսնեն իրենց շահերը Մերձաւոր Արևելքում։

Թէ որ աստիճան զգաստ, զգուշաւոր, արթուն և միաժա-
մանակ վճռական պիտի լինի մեր վերաբերմունքը դէպի բօլշե-
ւիկները, այդ պարզ պիտի լինի ամենքի համար, եթէ մատնա-
նքշենք այստեղ այն երկդիմի ընթացքը, որ բռնելէ սօվետական
Ռուսաստանը հանդէպ Վրաստանի Յայսնի է, որ սօվէտական
Ռուսիան հաշտութիւն է կնքել Վրաստանի հետ և ճանաչել է
վերջինիս անկախութիւնը։ Սակայն ժիաժամանակ նոյն սօվէտա-
կան Ռուսիան «սովէտական» Ազրբէջանի միջոցով պատերազմ
է մղրւմ նոյն Վրաստանի դէմ։

Բայց միթէ նոյնը չի անում սօվէտական Ռուսաստանը
նաև Հայաստանի վերաբերմամբ։ Նա մեղ առաջարկում է ակսել
իր հետ հաշտութեան բանակցութիւններ, նա նախօրոք ճանա-
չում է մեր անկախութիւնը, Կակայն միենոյն ժամանակ իրեն
յատուկ նենգամտութեամբ շարունակում է, իր վարձկան գործա-
կալների միջոցով, խլրտումներ առաջ բերել, ապստամբութիւն
կազմակերպել մեր երկրի մէջ՝ ողը ցնդեցնելու համար Ազատ,
Անկախ և Միացեալ Հայաստանի շէնքը, Կարելի է միթէ հաւա-
առւ, որ մեր պետութեան մէջ և մեր պետութեան դէմ վերջին
շաբաթների ընթացքում նիւթւող դաւերը կառարւում են մայն

ոեղական, անդրկովկասեան բօլշեիլների նախաձեռնութեամբ և
որ այդ բոլորի մէջ ոռւսական կենտրօնը որեէ մասնակցութիւն
չունի:

Հայաստանը, որ բոլոր երկիրների մէջ ամենից աւելի կա-
րօտ է խաղաղութեան և շինարար աշխատանքի, չի կարող որևէ
յուս դնել բօլշեիզմի վրա, որովհետեւ բօլշեիզմը գերեզման է հայ-
ժողովրդի ֆիզիքական գոյութեան և նրա քաղաքական անկա-
խութեան համար:

Եթէ որեէ ուրիշ երկրի վերաբերմամբ խօսք կարող է լինել
բօլշեիզմի յեղափոխական բնոյթի և դերի մասին, — մի բան, որ
միանգամայն ես ժխտում եմ, մեղ մօտ յամենայն դէպս բօլշեիզ-
մը բացարձակապէս մի հակայեղափոխական, հակապետական և
յետադարձ, ոէակցիօն շարժում է: Որովհետեւ որեէ քաղաքական
հասանքի կամ շարժման յեղափոխականութիւնը չափուում է ոչ
թէ նրա յեղափոխական ֆրազներով ու աղաղակներով, այլ նրա
յեղափոխական գործերով կամ, աւելի ճիշտը, նրա կատարած
գործերի յեղափոխական արդիւնքներով: Մինչդեռ, ինչպէս մենք
տեսանք, բօլշեիզմը տմենուրեք իր հետ և իր յետելց բերում է-
ամենասև ոէակցիա թէ քաղաքական, թէ սօցիալական և թէ
տնտեսական ասպարէզում: Իսկ Հայաստապնում բօլշեիզմը ոէակ-
ցիօն շարժում է կըկնակի տեսակէտով: որովհետեւ մեր սահման-
երի մէջ նա յենւում է նաև բացայայտօրէն ոէակցիօն տարրերի
վշա, Մենք զիտենք արդէն, որ բօլշեիլների յինարանը եղել են
գերիկինեան սպաներն ու զինւորները, նախկին ռուս զինւոր-
ները, ուստ աղանդաւորները, որոնք երազում են ցարական Ռու-
սաստանի վերականգնման մասին, և վերջապէս, թրքութիւնը,
որի հղէալն է համիսլամական մեծ կայսրութիւնը:

Յօլշեիզմի և համիսլամութեան դաշնը մի սատահական,
բոնագուսիկ բան չէ, ինչպէս կարծում են շատերը: Դա մի բնա-
կան եղայրակցութիւն է աշխարհիս ամենառէակցիօն երկու ոյ-
ժերի՝ ռւսութեան և թրքութեան: Մօնզօլական ողին և մօնզօ-
լական արիւնն է, որ այստեղ միացրել է երկու արիւնակից
մօնզօլակն ցեղերը՝ ռուս և թրք ցեղերը մի ընդհանուր ասի-
ական պաքարի մէջ ընդդէմ առաջաւոր եւրօպայի, ընդդէմ հա-
մաշխարհայն կուլտուրայի:

Կռւել Յօլշեիզմի դէմ նշանակում է կազմ իրավունք և սաք-
կութեան դէմ...

